Azg Ազգ

15 ՄԱՐՏ 2007 ՀԻՆԳՇԱԲԹԻ 47 (3699)

Դատավարություն, որ կարող է բացահայտել «Ազատություն» ռադիոկայանի դեմքը

Պրահայում լույս տեսնող «Orbr» եվրոպական անկախ ամսագրի հաղորդմամբ, «Ազատություն» ռադիոկայանի արդեն նախկին աշխատակից Աննա Կարաոեսյանը դատական գործ է հարուցել «Ազատություն-Ազաս Եվրոպա» ռադիոկայանի եւ հայկական ծառայության տնօրենության դեմ՝ իրեն աշխատանքից հեռացնելու որոշումը անօրինական ճանաչելու պահանջով:

Ժողովրդավարական արժեքների եւ մարդու իրավունքների պաշտպանության առաքելություն ունեցող ռադիոկայանը սփոփված է լինելու Պրահայի դատարանում բացատրություններ տալ եւ ապացուցել, որ հեռացնելով Աննա Կարաոեսյանին չի խախտել նրա իրավունքները եւ գործել է օրենքի շրջանակներում: Հայտնի է, որ ռադիոկայանը Աննա Կարաոեսյանին իր լության դիմաց որոշակի գումար է առաջարկել, ինչը սակայն վերջինս մերժել է:

Հիշեցնենք, որ Աննա Կարաոեսյանը «Ազատություն» ռադիոկայանի կենտրոնակայանում աշխատել է 1995 թվականի փետրվարից, վարել է հեղինակային սիրված ծրագրեր:

ՉՐԿՎԱԾՆԵՐ

Խաբեության բիզնես

Մարդիկ կեղծ բրոքերների զոհն են դարձել եւ անտուն մնացել

Գլխավոր դատախազության դիմաց հացադուլ երեկ հայտարարած **Ֆլորա Շախգուլյանին** նրա ճակատագիրը կիսող ուրիշ խաբված մարդիկ մենակ չեն թողել՝ եկել են աջակցելու, իսկ գուցե նաեւ առաջիկայում միանալու նրա հացադուլին:

«Մենք իրար հանդիպել ենք դատարաններում, դատախազությունում, ոստիկանությունում», ահա այսպես բնորոշեց բախտակից մարդկանց ներկայությունը Ֆ. Շախգուլյանը, որի՝ տոկոսով դրամ վերցնելու ցանկությունն ավելի ուշ նրան զրկել է բնակարանից: Կարճ ասած՝ նա ընկել է բրոքեր ձեւացող խաբեբաների ձեռքը, որոնց հետ ինչ-որ պայմանագիր է կնքել, իր կարծիքով տոկոսով փող վերցնելու, դուրս է եկել, որ 12 հազար դոլարի պայմանագրով նա վաճառել է իր 25 հազար դոլարանոց բնակարանը, իսկ 12 հազարից էլ 3200-ը պետք է տոկոս թողներ, միայն 8800 սանալով: Սակայն Ֆ. Շախգուլյանը երբ հասկացել է, որ ընկել է խաբեբաների ձեռքը, վերադարձել է սացած 5 հազար դոլարը եւ դիմել է իրավապահ մարմիններին՝ կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու հույսով: Իր բնակարանը, պարզվում է, Վիգեն Արզումանյանի անունով է, բայց տիկին Ֆլորան գործ է ունեցել Արթուր Գրիգորյանի հետ: Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Վիգեն Արզումանյանը խոշոր չափերի հափշտակում է կատարել, նրա նկատմամբ քրեական գործ է հարուցվել: Սակայն Ֆ. Շախգուլյանը այդպես էլ բնակարանի առուվաճառքի պայմանագիրը չի կարողացել անօրինական ճանաչել տալ:

Տես էջ 3

ԺՆԵՎ

Մինսկի խումբը ցանկանում է պահել բանակցությունների տեմպը

Օսկանյան-Մամեդյարով հավանական հանդիպում ապրիլի 25-ին Աստանայում

Երկար նախապատրաստված Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Վարդան Օսկանյան եւ Էլմար Մամեդյարով ժնեւյան հանդիպումը երեկ վերջապես կայացավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովի (Ռուսաստան), Բերնար Ֆասիեի (Ֆրանսիա) եւ Մեթյու Բրայզայի (ԱՄՆ), ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրշիկի մասնակցությամբ: Հանդիպման մանրամասներ, բնականաբար, չեն հաղորդվում, սակայն թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական կողմերը չեն բացառել, որ հաջորդ հանդիպումը կարող է կայանալ ԱՊՀ արտգործնախարարների հերթական գագաթժողովի շրջանակներում, որը տեղի կունենա ապրիլի 25-ին Աստանայում:

Հիշեցնենք, որ նախօրեին տեղի էր ունեցել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների խորհրդակցությունը, որի ընթացքում տարածաշրջան այցելած ֆրանսիացի համանախագահը գործընկերներին տեղեկացրել է կայացած հանդիպումների եւ ձեռք բերած պայմանավորվածությունների մասին:

Մինչ Օսկանյան-Մամեդյարով հանդիպումը, «Ազատություն» ռադիոկայանի տեղեկացմամբ, Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի գերատեսչությունների ղեկավարները ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի նստաշրջանում իրենց ելույթներում հանդես են եկել փոխադարձ ակնարկներով: Մասնավորապես Վարդան Օսկանյանը հիշեցրել է Նախիջեւանում վերջին մի քանի տարում 5 հազար հուշարձանների ավերածությունների մասին: ՀՀ արտգործնախարարը խոսել է նաեւ Թուրքիայի վարած քաղաքականության մասին: Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը, բնականաբար, չի մոռացել նշել «ագրեսոր Հայաստանի, Ադրբեջանի տարածքի 20 տոկոսի գավթման» եւ այլ նմանօրինակ քարոզչական դրույթների մասին:

Ա. ՏԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կոնդոլիզա Ռայսը դեմ է ցեղասպանության օրինագծին

ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը եւ արտգործնախարար Ռոբերտ Գեյթսը Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիին եւ Հանրապետական կուսակցության առաջնորդ Թոմ Լանտոսին նամակ են հղել՝ կոչ անելով չընդունել Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը: «Ազերի պրես» գործակալության տեղեկացմամբ, Ռայսը հայտարարել է, որ նման օրինագծի ընդունումը կվնասի թուրք-ամերիկյան հարաբերությունները եւ ԱՄՆ միջազգային հարաբերությունների համակարգը:

Ամերիկյան ռադարի տեղաբաշխման բանակցություններ Վրաստանի եւ Ադրբեջանի հետ

Արդիսն Ադրբեջան եւ Վրաստան կայցելի Պենտագոնի բարձրաստիճան սպաների պատվիրակությունը: «Դեյ.ազ» գործակալությունը տեղեկացնում է, որ ամերիկյան պատվիրակությունն այցելության ընթացքում պատրաստվում է նշված երկրների ղեկավարությունից աջակցություն սպանալ՝ Կովկասում հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգերի տեղաբաշխման ծրագրերի առնչությամբ: «**Ազգի**» ընթերցողներն արդեն տեղյակ են ամերիկացի գեներալ Հենրի Օբերինգի Բրյուսելում արած հայտարարությանը, թե Միացյալ Նահանգները պատրաստվում է հակահրթիռային պաշտպանության ռադար տեղադրել հարավկովկասյան երկրներից մեկում: Ա. Հ.

Հանրային լսումներ «Սեփականության իրավունքի պաշտպանություն» թեմայով

ԵՐԵՎԱՆ, 14 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Պետության կարիքների համար անհրաժեշտ գույքի օտարման գործընթացն իրականացվել է ՀՀ Սահմանադրության, մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի բազմաթիվ խախտումներով, ինչի հետեւանքով ոտնահարվել են ՀՀ քաղաքացիների սեփականության եւ այլ իրավունքները: Մարտի 14-ին «Սեփականության իրավունքի պաշտպանություն» թեմայով հանրային լսումների ժամանակ նման հայտարարություն արեց միջոցառման կազմակերպիչ, «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության նախագահ **Լարիսա Ալավերդյանը**:

Նրա խոսքերով, լսումների նպատակն է բացահայտել շարունակվող մարդու իրավունքների մինչ օրս խախտումների հետ կապված խնդիրները, մասնավորապես, «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 25-ի թիվ 108 որոշման վտանգները՝ «սեփականության իրավունքի խոցելիության առումով»:

«Սեփական իրավունքի պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ **Վաչագան Հակոբյանի** բնորոշմամբ, կառավարության նշված եւ այլ որոշումների հիման վրա, որոնք հետագայում ճանաչվեցին հակասահմանադրական, Երեւանի քաղաքապետարանը, օգտագործելով ուժային կառույցների, վարչական եւ դատական համակարգերի լծակները, իրականացրել եւ այժմ էլ շարունակում է իրականացնել ՀՀ քաղաքացիների զանգվածային տեղահանում իրենց պատկանող բնակարաններից:

ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր **Վարդան Մկրտչյանը** հայտարարեց, որ «քաղաքացիների իրավունքների վերականգնման համար պայքարը շարունակվելու է այնքան ժամանակ, մինչեւ կփոփոխվեն եւ ճիշտ կկիրառվեն համապատասխան օրենքները»:

Կոսովոյի կարգավիճակի հարցը կարող է հանձնվել ՄԱԿ-ի ԱԽ-ին

Եվրոմիությունը համամիտ է Կոսովոյի կարգավիճակի հարցը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին հանձնելու ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Մարտի Ահտիսաարիի որոշմանը, չնայած շահագրգիռ կողմերի տարաձայնություններին:

«Մենք պաշտպանում ենք Ահտիսաարիին եւ գործընթացի նոր փուլին անցնելու նրա որոշումը», հայտարարել է ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության գծով գերագույն հանձնակատար Խավիեր Սոլանայի մամլո քարտուղար Քրիստինա Գալլախը:

«Թեեւ ափսոսանքով, բայց պաշտպանում ենք Ահտիսաարիի այն որոշումը, որ փոխհամաձայնությունն անհնար է եղել», ավելացրել է Գալլախը:

Այդուհանդերձ, Եվրոմիությունը Ռուսաստանի դիրքորոշումից տարբերվող դիրք է բռնել: ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Միխայիլ Կամինինն ավելի վաղ հայտարարել էր, որ Մոսկվան վաղաժամկետ է համարում տվյալ խնդրի փոխանցումը ՄԱԿ-ին:

Ահտիսաարին շաբաթ օրը հայտարարեց, որ Կոսովոյի եւ Սերբիայի պատվիրակությունների միջեւ 14 ամիս տեւած բանակցություններն ավարտվել են անարդյունք: Կոսովոյի երկրամասում ներկայումս 90 տոկոս կազմող ալբանացիներն առաջվա պես պահանջում են անկախություն, իսկ սերբերը համաձայն են շնորհել միայն լայն ինքնավարություն:

Պ. Ք.

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱՏՕ-Հայաստան գործակցությունից դուրս չեն նաեւ մեր գիտնականները

Հյուսիսատլանտյան դաշինքում (ՆԱՏՕ) Հայաստանի դեսպան **Սամվել Մկրտչյանի** գնահատմամբ վերջին 3 տարիներին Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները բավականին խորացել եւ ընդլայնվել են: Դրա փաստացի ապացույցը նա համարում է այդ կառույցում մեր առանձին տեղն ունենալն ու համատեղ իրականացվող «Անհատական գործընկերության գործողության ծրագիր» գոյությունը, որի ընթացքի մասին հաջորդ շաբաթ իր կարծիքը կհայտնի Հայաստան ժամանած միջազգային քարտուղարության հատուկ խումբը: Իսկ ապրիլի 4-ին հայկական պատվիրակության եւ ՆԱՏՕ-ի անդամ 26 երկրների դեսպանների մասնակցությամբ Բրյուսելում կգումարվի հատուկ նիստ՝ քննարկելու մոնիտորինգի արդյունքներն ամփոփող փաստաթուղթը: Ենթադրելի է, որ հայկական կողմը կներկայացնի իր նկատառումներն ու հիմնավորումները, իսկ դեսպանները կխոսեն իրենց հայտնաբերած

թերությունների մասին՝ մատնացույց անելով դրանցից ազատվելու եղանակներն ու միջոցները: «Դա քաղաքական երկխոսության ու խորհրդակցության ձեւաչափ է, չափազանց կարեւոր մեր երկրի համար, որովհետեւ հնարավորություն է տալիս դաշինքի անդամ բոլոր երկրներին միանգամից տեղեկացնելու Հայաստանի անվտանգության խնդիրների, միջավայրում տեղի ունեցող վերջին փոփոխությունների ու մեր դիրքորոշումների մասին», «Ուրբաթ» ակումբում երեկ ասաց Սամվել Մկրտչյանը:

ՆԱՏՕ-ին Հայաստանի անդամակցության վերաբերյալ նա նշեց, որ դաշինքի 26 անդամներին գումարվում են եւս 23 գործընկերներ, որոնցից շատերն արդեն իսկ մոտ ապագայում անդամակցելու ցանկություն են հայտնել: Սակայն գործընկերությունը բնավ չի ենթադրում պարտադիր անդամակցություն՝ յուրաքանչյուր երկիր առաջին հերթին ինքն է գնահատում ազգային անվտանգության սպառնալիքներն ու դրանից ելնելով քաղաքական որոշում կայացնում:

Տես էջ 2

ԱԶԳ

Ընթացիկ

Այս խորհրդարանական ընտրությունները տարբերվելու են մինչ այս եղած բոլոր ընտրություններից

Ովքե՞ր են ծախսել իշխանություններին

«Հայելի» ակումբում երեկ Հանրաքվեական կուսակցության խորհրդի անդամ, Ազգային ժողովի (ԱԺ) պատգամավոր **Սամվել Նիկոյանը** համոզմունք հայտնեց, որ այս խորհրդարանական ընտրությունները տարբերվելու են մինչ այս եղած բոլոր ընտրություններից՝ թե՛ ժամանակային, թե՛ ներքաղաքական իմաստով: Նրա խոսքով, այս խորհրդարանական ընտրությունների ժամանակ պայքարը գնալու է հիմնականում իշխանական կուսակցությունների միջև, իսկ հանրաքվեականներն իրենց մրցակից են համարում ՀՅԴ-ին, «Բարգավաճ Հայաստանին» եւ ՄԱԿ-ին: Հետո էլ պատգամավորը մեկնաբանեց, որ իշխանական կուսակցությունների միջեւ պայքար ասելով նկատի ունի, որ դասական առումով այսօր ընտրություններում իրար մրցակից են այն ուժերը, ովքեր ավելի մեծ ընտրազանգված կարող են տանել իրենց հետեւից, իսկ զուտ ընդգծված գաղափարական պայքար չկա:

Հանրաքվեական պատգամավորի հետ բանավիճող պատգամավորության նախկին փոխնախարար, արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախկին նախարար **Վահան Շիրխանյանը** խորապես համոզված է, որ պայքարը ընթանալու է միայն իշխանական կուսակցությունների միջեւ, քանի որ մի կողմից մեր երկրում ջարդված է քաղաքացիական հասարակությունը, մյուս կողմից էլ՝ չկա ընդդիմություն: Ի դեպ, Վահան Շիրխանյանը, որ նախապես ընդգրկված է եղել «Ժառանգություն» կուսակցության համամասնական ցուցակում, այժմ դուրս է եկել ընտրացուցակից: «Մտածում էի, որ ընդդիմադիր միասնական դաշտ կձեւավորվի եւ այդ դեպքում իմաստ ուներ մասնակցելը, բայց առանձին կուսակցական ցուցակներով արդեն անիմաստ է», մեկնաբանեց պատգամավորության նախկին փոխնախարարը:

Վահան Շիրխանյանը կարծում է, որ ընտրությունների նախաշեմին պետք է ընդդիմությունը միավորվեր եւ սկսեր պայքարը ոչ թե խորհրդարանում աթոռ ունենալու, այլ ընտրություններն օրինականության դաշտ բերելու եւ Հայաստանում քաղաքացու ինստիտուտը վերահաստատելու համար: Արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախկին նախարարի ներկայացմամբ, այսօր մեր երկրում կա 3 տիպի ընդդիմություն: Առաջին տեսակը, նրա խոսքով, ընտրապայքարի մեջ մտած, ընդդիմադիր ներկայացած, բայց իրականում իշխանությունների հետ գործարքի մեջ մտած ընդդիմադիրներն են: Երկրորդ ուղղությանը պատկանող ընդդիմադիրները կարելի է ասել «անկեղծ ընդդիմադիրներն են», ովքեր ընտրապայքարում են եւ հույս ունեն հաջողության: Երրորդ տեսակում, որում նաեւ իրեն է տեսնում Վ. Շիրխանյանը, ընդգրկված են ընտրություններին չմասնակցող ընդդիմադիրները, ովքեր սակայն կազմակերպելու են հասարակական, վերկուսակցական շարժում:

Իշխանություններին ծախված ընդդիմության անուններ պատգամավորության նախկին փոխնախարարը չտվեց, բայց ասաց, որ նրանք այն մարդիկ են, ովքեր հենց սկզբից հայտարարել են ընտրություններին միայնակ գնալու մասին: «Ընտրություններին մենակ գնալ, նշանակում է չթառայել ժողովրդի շահերին եւ իշխանություններին թույլ տալ ընտրություններն անցկացնել իրենց նախագծած ծրագրով», ասաց նա: Ազնիվ, իրական պայքարի ելածները եւս փիչ չեն, եւ Շիրխանյանը նրանց շարքին դասեց «Ժառանգություն», «Հանրաքվեություն» կուսակցություններին, «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնությանը:

Վահան Շիրխանյանի դիտարկմամբ, այսօր կարող են ընտրվել միայն «դաբռո» ստացած, փող ունեցող եւ մանիպուլյացիա անող մարդիկ: Սամվել Նիկոյանը վրդովվեց լրագրողի հարցից, թե ինքը դրանցից որն ունի: Պատգամավորը նշեց, որ ինքն ապրում է իր եւ իր կնոջ արդար աշխատանքով, հողամասեր եւ այլ բաներ չունեն ու ապրում են Զովեժի ամենավերջին շենքում:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Նայսեր-դայսեր» դանակի հերթական զոհը

Անցած չորեքշաբթի կառավարությունը հավանություն տվեց «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որը այլ փոփոխությունների հետ, «Գովազդի մասին» օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, առաջարկում է հստակ սահմանել նաեւ վերահսկողություն իրականացնող մարմինը:

Այս նախագիծը կենսական անհրաժեշտություն է՝ օրենքի ու բարոյականության բոլոր չափանիշներից դուրս հայտնված գովազդային դաշտի առողջացման համար: Անազնիվ, անբարեխիղճ գովազդից տուժածների օրինակները բազմաթիվ են:

Օրերս **«Ազգի»** խմբագրություն էր եկել **Վաչագան Հակոբյանը,** որին ծանոթ ենք Գլխավոր եւ Հյուսիսային պողոտաների իրացումների հետ կապված ցույցերից, նա շարժման ղեկավարներից է: Այս անգամ նրա բողոքի թեման միանգամայն այլ էր: Շատերի նման (այդ մասին գրվել է նաեւ մեր թերթում) նա էլ, հրաժարվելով «Միր», «Շողակաթ», «Երեւան» եւ այլ ալիքներով սփռվող գայթակղիչ գովազդով, որոշել է տիկնոջը նոր տարվա առթիվ անակնկալ մատուցել, եւ 19 հազար 900 դրամ վճարելով, գնել է ամեն օր գովազդվող, այսպես ասած՝ «նայսեր-դայսեր» խոհանոցային սարքը:

Ամանորի ճիշտ նախօրյակին շատ տանտիկիններ երազանք (գոնե այդպիսին պիտի լիներ գովազդի համաձայն) նվերն ստանալով, Վաչագանի տիկինն էլ փորձում է այն նոր տարվա աղցաններ պատրաստելիս: Փորձելն ու դանակի դատմները ջարդվելը մեկ է լինում: Հիշեցնենք, որ այս չարաբաստիկ «նայսեր-դայսերը» նախատեսված է մրգի, բանջարեղենի, պանրի, երշիկեղենի ձեւավոր մանրացումների համար: Գովազդն այնքան շքեղ է ներկայացնում «բազմաֆունկցիոնալ» սարքը, որ որեւէ դյուրահավաս հեշտությամբ կարող է ընկնել թակարդը, եւ երեւի շարունակում են ընկնել: Անկախ բողոքողների թվից, գովազդներն արդեն 2 տարի շարունակվում են, այսինքն, պահանջարկը դեռ կա, եւ բանից անտեղյակները դեռ շատ են:

Անհասցե կազմակերպությունը, կամ անհասը, օգտագործելով արտասահմանյան գովազդային հոլովակները, ակնհայտորեն առաջարկում է ոչ այն, ինչ գովազդում է, այսինքն՝ իրականում գնորդին վաճառում է ապրանքի ֆիրմայինին նմանակված տարբերակները: Դրանցով, տուժածների վկայությամբ, առանց սարքը վնասելու, հնարավոր է մանրացնել միայն եփված մթերքը:

Գովազդի հերթական զոհ Վաչագան Հակոբյանը խմբագրություն էր բերել սարքի ջարդված մասերը: Նա պատմեց, որ մի քանի անգամ զանգահարել է նշված համարով, պահանջել վերադարձնել գումարը, քանի որ նախօրոք հավաստիացրել են, որ սարքը 20 օրվա երաշխիքային ժամկետ ունի: Սակայն ձգձգել, ձգձգել են այնքան, մինչեւ երաշխիքային ժամկետն էլ է անցել:

Պատասխանատուին միայն 28-88-88 հեռախոսահամարով հայտնի այս անհայտ ֆիրման գտնելու ամեն փորձ դատապարտված է ձախողման: Տողատակի տիտրից միայն ենթադրվում է, որ գործ ունենք ինչ-որ տելեմարկետի հետ:

Այս օրինակը դարձյալ ապացուցում է, թե որքան անվերահսկելի է մեր հեռուստատեսային գովազդի դաշտը: Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը երբեւէ իրականացնո՞ւմ է էլեկտրոնային միջոցներով տարածվող գովազդների մոնիտորինգ: Ինչո՞ւ երբեւէ չենք տեղեկանում դրանց մանրամասներին, ինչո՞ւ չեն հրապարակվում գովազդային օրենսդրության խախտման դեպքերը: Չէ՞ որ անազնիվ գովազդից կորուստները միայն նյութական չեն: Առանց լիցենզիաների առկայության, դեղերի ու կասկածելի հմտություններով բժիշկների գործունեության գովազդները, օրինակ, կարող են անվերականգնելի վնասներ պատճառել մարդկանց:

«Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության նախագահ **Աբգար Եղոյանից** տեղեկացանք, որ կազմակերպությունն արդեն 6 բողոք է ստացել չարաբաստիկ «նայսեր-դայսեր»-ների վերաբերյալ: Իրենց միջնորդությունից հետո, երբ պահանջագիր են ներկայացրել տելեմարկետին, հաջողվել է 5 տուժածների վերադարձնել գումարները: Ի դեպ, բողոքներ եղել են ոչ միայն «նայսեր-դայսեր»-ից: Ամանորի նախօրյակին գովազդվել են նաեւ հատուկ բուդ կտրելու դանակներ, որոնց գնորդներից շատերը եւս խոր հիասթափություն են ապրել:

Այս պահին գովազդները շարունակվում են, հիմա տելեմարկետը հեռատադիսողին առաջարկվում է 50 հազար դրամանոց «էյր-դայ» (օդը չորացնելու) սարք: Ի դեպ, «Սպառողների իրավունքների պաշտպանություն» կազմակերպությունը դրա վերաբերյալ նույնպես բողոք է ստացել:

Ռ. Դ.

ԵՎ ՄԵԿ ՀԱՐՑԱԽՈՒՅՑ

Ըստ «Սոցիոմետրի»՝ 8 կուսակցություն կհաղթահարեն 5 տոկոսի արգելքը

Հայկական սոցիոլոգիական մի քանի կենտրոններն այսուհետեւ իրար հերթ չեն տալու՝ թվախեղդ ու տոկոսախեղդ անելու մեզ: Ահա երեկ էլ հայտնի դարձան «Սոցիոմետր» հետազոտական կենտրոնի հարցման արդյունքները, ըստ որոնց խորհրդարանական առաջիկա ընտրություններում 5 տոկոսի արգելքը կարող են հաղթահարել 8 կուսակցություն՝ ՀՀԿ-ն, «Բարգավաճ Հայաստանը», ՀՅԴ-ն, ՕԵԿ-ը, «Ազգային միաբանությունը», ՀԺԿ-ն, «Ժառանգությունը», Տիգրան Կարապետյանի ԺԿ-ն: Հետազոտությունն իրականացրած «Սոցիոմետր» տնօրեն Սիարոն Ադիբեկյանը խուսափել է հայտնել ուսումնասիրությունը պատվիրող կազմակերպությունների անունները:

Մ. Խ.

Վիկտոր Դալլաքյանը ընտրարշավի առաջին օրվանից կլինի Վանաձորում

Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը, որն ինչպես հայտնի է, մեծամասնական կարգով առաջադրվել է թիվ 30 ընտրատարածքում, պատշգամավոր քարոզարշավից մեկ օր առաջ՝ ապրիլի 7-ին կմեկնի իր ընտրատարածքն ընդգրկող Վանաձոր եւ կվերադառնա միայն ընտրություններից հետո: Նա պատրաստվում է օգտվել քարոզարշավի անցյալում եւս կիրառված գործելակերպից եւ անցնել բակ առ բակ (Գալուստ Սահակյանի ականջը կանչի), իսկ երեկոները վանաձորցիները տեղական հեռուստաընկերության եթերից կընդունեն Վ. Դալլաքյանի՝ ԱԺ-ում հնչած ելույթների տեսագրությունները:

ՆԱՏՕ-Հայաստան գործակցությունից դուրս չեն նաեւ մեր գիտնականները

1-ին էջից

Դեսպանի ասելով, ՆԱՏՕ-ի լավագույն գործընկերներից են նաեւ Շվեդիան, Ֆինլանդիան, որոնք նույնպես չեզոք դիրք ունեն անդամակցության հարցում: Քաղաքական սուր պայքարի ժամանակ, հատկապես խորհրդարանական կամ նախագահական ընտրությունների նախաշեմին, այդ երկրներում եւս չեզոքությունից հրաժարվելու եւ ՆԱՏՕ-ին անդամակցելու կոչերը դառնում են քաղաքական որոշ կուսակցությունների օրակարգային հարցերը»:

Հարավային Կովկասը որպես անվտանգության մեկ միասնական համակարգ դիտարկելու մոտեցումը, նրա բնութագրմամբ, փոքր-ինչ խնդրահարույց է, որովհետեւ եթե մոտ ապագայում Վրաստանը դառնա ՆԱՏՕ-ի անդամ, կունենանք դաշինքի անդամ սահմանակից երկրորդ հարեւանը. «Թուրքիայի հետ սահմանը մեզ համար բարի չէ, քանի որ բերում է սառը հարաբերություններ: Անկեղծ ասած, ՆԱՏՕ-ն «Անհատական գործընկերության գործողության ծրագիրը» մշակել է Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ մեր հարաբերությունները, ինչպես նաեւ վրաց-ռուսական հարաբերությունները հաշվի առնելով: Թե ինչ փոփոխություններ կլինեն առաջիկայում, կախված է տարածաշրջանային ընդհանուր զարգացումներից: Մենք մշտապես շեշտում ենք դրա կարեւորությունը, օրինակ, 2 օր առաջ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հանդիպի դիվանագիտության հարցերով տեղակալի՝ Ժակ Ֆորնեի հետ այցելեցինք մեր գիտությունների ազգային ակադեմիա, եղանք նաեւ երկրաբանության ինստիտուտում, որտեղ ներկայացվեց ՆԱՏՕ-ի գիտության բաժանմունքին հանձնված տարածաշրջանային սեյսմիկ մոնիտորինգի ծրագիրը: Մենք ունենք դրա իրագործման բոլոր միջոցները՝ Գառնիում ստեղծվել է կենտրոն, կա սորգեստյա լաբորատորիա: Այդ գաղափարը խիստ հետաքրքրեց ՆԱՏՕ-ին: Դրանից բացի ունենք նաեւ տարածաշրջանային նշանակություն ունեցող գետերի աղտոտվածության մոնիտորինգի ծրագիր: Այնպես որ, մեր հարեւանների հետ համագործակցությունը շարունակվում է», ասաց դեսպանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Դանակահարեց թիկունքից

Մարտի 13-ին ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Արտաշատի բաժնի աշխատակիցները, մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով, բերման են ենթարկել 1965 թ. ծնվ. Արսեն Հ.-ին եւ 1968 թ. ծնվ. Արշավիր Ս.-ին: Պարզվել է, որ Գոլեցյանի փողոցի թիվ 14 տանը, վիճաբանության ժամանակ Արսեն Հ.-ն դանակով հարվածել եւ թիկունքի մասում վնասվածք է պատճառել Արշավիր Ս.-ին: Հանգամանքները պարզվում են, կատարվում է հետաքննություն:

Անզգույշ կրակոց

Մարտի 13-ին ոստիկանության Մեծամորի բաժնում ահազանգ է ստացվել, որ կրծքավանդակի մասում ստացած հրազենային վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել Անուշիկ Սարգսյանը: Պարզվել է, որ նույն օրը տան բակում, 1994 թ. ծնվ. Իշխան Ս.-ն հոր՝ 1962 թ. ծնվ. Խաչատուր Ս.-ի տանը անօրինական կերպով պահվող (հանգուցյալ եղբորը պատկանող) 16 տրամաչափի երկփողանի որսորդական հրացանից անզգուշաբար կրակել եւ վնասվածք է պատճառել Անուշիկ Սարգսյանին: Հրացանն առգրավված է: Հանգամանքները պարզվում են, կատարվում է նախաքննություն:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Լուսագրողների սենյակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յոդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ
ԸՆԹԱՑԻԿ
www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

Ինքնակարգավորումն ու վարքականոնը՝ ՁԼՄ-ների զարգացման խթան, իշխանական բիրտ վերահսկողությունը՝ հետընթացի մղիչ

Մարտի 10-ից ի վեր, երբ հայաստանյան խանմեկ ՁԼՄ-ներ ստորագրեցին լրագրողների աշխատանքի վարքականոնը, փաստորեն այն ստորագրած ՁԼՄ-ների լրագրողներն աշխատում են մի նոր արժեհամակարգի չափորոշիչներով: Կանգ չառնելով նման ձեռքբերման վրա, լրագրողական ակտիվ շրջանակները Երեւանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ, ԵԱՀԿ եւ Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան գրասենյակների հովանավորությամբ մարտի 14-ին եւ 15-ին իրականացնում են սեմինար, որի շրջանակներում ոչ միայն վերլուծում են Վարքականոնի արդյունավետությունը, այլեւ փորձի փոխանակում են անում Թուրքիայից, Ադրբեջանից, Ռումինիայից, Բուլղարիայից ժամանած համաոլասախան մասնագետների հետ: Ի դեմ, վերջիններս մեզ մխիթարեցին իրենց երկրներում նմանատիպ իրավիճակների առկայությամբ, որ գնահատվեց մենթալիտետային եւ անցողիկ, որ խաղախաղության ամրապնդմանը զուգահեռ, հուսանք, կվերանա: Վարքականոնին զուգահեռ ինքնակարգավորման հարցը, որը միշտ էլ արդիական է: Այն կնպաստի լրատվամիջոցների վարքականոնային շեղումները սրբագրելու գործին:

Սեմինարի մասնակիցները խոսեցին վարքականոնների խախտման դեպքերի մասին, որոնցից են հասարակության պահանջարկն ունեցող թեմաների փոխարեն պատվիրված եւ կամ նվերով ու գումարով ու շահով պարտադրվածները: Մասնավորապես «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանը բերեց վերջին օրերի ամենաթարմ օրինակը, թե ինչպե՞ս եւ ի՞նչ հանգամանքներ հաշվի առնելով են հայաստանյան լրատվամիջոցները պարզաբանում կամ անտեսում «Ջերմուկի» մուտքն ամերիկյան շուկա արգելելը: Ըստ զեկուցողի, «Ջերմուկի» ֆինանսական հզորացումը, հետեւաբար նաեւ գովազդի պատվիրումը ձեռնտու է հեռուստատեսություններին, այդ պատճառով էլ եթերը հեղեղված է «մի կում իսկական կյանքից» համարվող ջրի մասին միակողմանի ներկայացնող հրապարակումներով, իսկ տպագիր մամուլը, որը ոչ մի շահ չունի «Ջերմուկից», կամ լռեց, կամ էլ այլ մեկնաբանություններով ու տեսանկյուններով արձագանքեց կատարվածին: Մինչդեռ կարեւոր է հասկանալ, թե որքանո՞վ է այն վնասակար (եթե իհարկե վնասակար է) հասարակության համար:

«Ինչպես Պահին պետք է դիմանալ տարբեր ցանկությունների գայթակղությանը, այնպես էլ ներին համոզմունքով եւ մշտապես պետք է դիմակայել ծարով սպասվող գումարներին, հրավերներին եւ այլ հնարավորությունների տրամադրմանը, որոնք ոչ այլ ինչ են, քան կաշառավություն», նշեց «Ռադիո հայ» ռադիոկայանի տնօրեն Արամ Մկրտչյանը, որը խոսեց նաեւ լրատվամիջոցների ղեկավարների ցածր իրավագիտակցության մասին:

Սեմինարին զեկուցումով հանդես եկավ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը: Հաջորդական նիստերը վարեցին Ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գետոյանը, Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը: Ելույթներ ունեցան եւ բանավեճերին ակտիվ մասնակցեցին Ռադիոլուրի աշխատակից Թաթուլ Հակոբյանը, Երեւանի մամուլի ակումբի փորձագետ Էլինա Պողոսբեկյանը, Թուրքիայի «Սաբահ» թերթի օմբուդսմեն Յավուզ Բայդարը եւ ուրիշներ: Սեմինարն իր աշխատանքները կշարունակի այսօր:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խախտվում է տեղեկատվության ազատության իրավունքը

Այս տարի հունվարի 25-ին Շիրակի մարզի ինը համայնքների դեմ նույն մարզի առաջին ատյանի դատարան քաղաքացիական հայց էր ներկայացրել ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը՝ վերականգնելու տեղեկատվության ազատության իր խախտված իրավունքները:

Մարզի Ազատան, Շիրակ, Լուսադբյուր, Ամասիա, Ողջի, Արդենիս, Մեծ Սեղասար, Փոքր Սեղասար, Հոռոմ համայնքների համայնքապետարանները ակումբին չեն տրամադրել 2006 թվի իրենց բյուջեի փաստաթղթի պատճենը, ավագանիների 2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2006 թվականի սեպտեմբերի 30-ն ընդունած որոշումների պատճենները:

Նույն տեղեկությունները ստանալու համար «Ասպարեզ» ակումբը դիմել է Շիրակի մարզի 119 համայնքներին, ստացել է 71-ից ամբողջությամբ, այն էլ 6 ամիս տեւած հարցումների ու դատական գործերի արդյունքում: Ինչպես տեղեկացնում է ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, 7-ը դատաքննության ընթացքում, 10 համայնքից մասնակիորեն (հիմնականում կա բյուջեն, չկան ավագանու որոշումները), 36 համայնքից բոլորովին արձագանք չի ստացել, իսկ 2 համայնք (Ամասիա եւ Ողջի), չնայած օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռին, պահանջված փաստաթղթերը դեռ չեն տրամադրել:

Օրենքով սահմանված ժամկետում (հարցումը ստանալուց հետո 5 օրում) ակումբի հարցումներին պատասխանել են Շիրակի մարզի 119 համայնքներից միայն 4 համայնքների՝ Հառիճի, Գետափի, Փանիկի եւ Նոր Կյանքի գյուղապետները:

Սեփական փորձից ելնելով, ակումբում եզրահանգել են, որ արդարադատության համակարգը չնչին վերապահումներով աշխատում է տեղեկատվության բացահայտման եւ հանրությանը հասցնելու գործում: Համակարգն ավելի շատ է հարկավոր աշխատեցնել՝ բոլոր հնարավոր ուղղություններով: Այսպիսով, լուրջ անհանգստություններ կարելի է պատճառել բոլոր նրանց, ովքեր չեն կատարում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները եւ հանրությանը սիրահոժար չեն տրամադրում հանրային նշանակության տեղեկությունները:

Հետեւողական պայքարի մասին հայտարարությանը զուգահեռ ակումբը տեղեկացնում է, որ առաջիկա 10 օրում թվով 10 նոր քաղաքացիական հայցեր կներկայացնի Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ մարզի 10 համայնքների:

Ն. Պ.

35-րդ ընտրատարածքայինն էլ հաջողությամբ «իրենցով արեցին»

Հայտնագործություն արած չեմք լինի, եթե ասեմք, որ ընտրությունների ազատ ու արդար լինել-չլինելը շատ բանով կանխորոշվում է նախ ընտրական հանձնաժողովների կազմով ու կառուցվածքով: ՀՀ Գյումրիում գործող 35-րդ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում առկա 6-3 հարաբերակցությունը՝ հօգուտ իշխանությունների ազդեցության դաշտի ներկայացուցիչների, լինելով երեւի ավել կամ պակաս չափով ընդունված մոդել նաեւ մյուս հանձնաժողովների համար, արդեն իսկ նշանակում է, որ իշխանական կառույցներն ընտրական գործընթացներում ամեն դեպքում կարող են հանձնաժողովներին իրենց ուզածը թելադրել եւ անցկացնել: Սակայն՝ ինչպես երեւում է՝ հանրապետության գործող իշխանություններն այդքանով էլ չեն բավարարվում եւ համապետական ընտրությունների , նախապատրաստության շրջանում շատերում են իրենց անվերապահորեն «ապահովագրել» նաեւ հանձնաժողովների ղեկավար կազմի հարցում, այստեղ ապրանց քաշվելու իրենց ցանկալի «սրբագրումները» պարտադրելով:

Համենայն դեպս՝ այսպես են մտածել տալիս հիշյալ 35-րդ ընտրատարածքային հանձնաժողովում վերջին մի քանի օրերին ծավալված իրադարձությունները, որոնք հայտնվել էին լրատվամիջոցների գործուն ուշադրության կենտրոնում: Եթե այստեղ մարտի 12-ին 6 անդամների անցկացրած նիստն օրինական է, ապա հանձնաժողովն այստեղ կունենա նոր նախագահ: Նիստում կատարված այս փոփոխության միակ տեսանելի, թեեւ չհայտարարված պատճառն այն է, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արդեն մի քանի տարի ղեկավարած Ռոբերտ Ասատրյանը ՕԵԿ-ական է: Հանձնաժողովի այս նիստն ընթացել է նրա՝ այդ պահին դեռ գործող նախագահի եւ ԱԺՄ-ն ու «Ազգային միաբանությունը» ներկայացնող անդամների բացակայությամբ, ի դեմ՝ լրագրողների (բացի մեկից) եւ հեռուստախցիկների հեռանալուց հետո, գրեթե անմիջապես հաջորդելով նախագահի տեղակալի ընտրության հարցով նույն 6 անդամների պահանջով հրավիրված արտահերթ նիստին: Իսկ ամեն ինչ սկսվել էր նրանից, որ ավելի վաղ հանձնաժողովի 3 անդամներ, այդ թվում նախագահի նախկին տեղակալը, վայր էին դրել իրենց լիազորությունները եւ դուրս էին եկել հանձնաժողովի կազմից: Երկար չպատմելու համար ասեմք, որ մեր ներկայությամբ մարտի 9-ին տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցությունում եւ ամսի 12-ի առաջին նիստում հստակորեն ակտիվ էին իրենց անդամության փաստաթղթերը նոր ներկայացրած ու նախկինում դեռ ոչ մի նիստի չմասնակցած նոր անդամները, որոնցից մեկն էլ ընտրվեց նախագահի տեղակալ եւ մինչ այդ էլ անհամբեր առաջարկում ու պնդում էր օրակարգ մտցնել հանձնաժողովի նախագահին անվստահության հարցը: Ուղղորդվածությունն ակնհայտ էր, եւ ընդհանրապես այդ ամենը անտես ռեժիսորի թելադրած վաս ներկայացման տպավորություն էր թողնում, որտեղ ոմանց բավական տհաճ դեր էր հանձնարարված:

Ա. Մ.

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Հայ գործարարները դժվարություններ են ունենում վիզաներ ստանալիս

Հայաստանում հավատարմագրված դեսպանությունների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների երեկ կազմակերպած հանդիպման հիմնական նպատակն այն էր, որ հետաքրքրվի հայ գործարարների մուտքը այլ երկրներ: Հանդես գալով բացման խոսքով, Հայաստանի արտգործնախարարի տեղակալ **Արման Կիրակոսյանը** նշեց, որ այն երկրների հետ, որոնց ներկայացուցիչները ներկա են հանդիպմանը, Հայաստանը ունի լավ հարաբերություններ, բայց դեռեւս կան լուծման կարիք ունեցող խնդիրներ:

ՖՈՏՈԼՈՒՐ

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահ **Արսեն Ղազարյանը** նախ ներկայացրեց միության գործունեությունը, հայտնելով, որ նրան անդամակցում են շուրջ 500 գործարարներ, որոնք վճարում են Հայաստանի բյուջեի մոտ 70 տոկոսը: Միության հիմնական խնդիրներից է Հայաստանից արտահանման եւ ծառայությունների արտահանմանն աջակցելը: Արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների ձեռնարկությունները հագեցած են նոր տեխնոլոգիաներով, որոնց հզորությունների համար հայկական շուկան փոքր է: Հետեւաբար, նրանք պետք է գտնեն նոր շուկաներ եւ ընդլայնեն արդեն ունեցածները: Այդ նպատակով իրականացվող միջոցառումներից Արսեն Ղազարյանը մասնանշեց առեւտրաարդյունաբերական ցուցահանդեսները: Դրանցից յուրաքանչյուրին մասնակցելուց հետո համագործակցության 3-4 պայմանագիր է կնքվում: Մեր ընկերությունների համար արտահանումը զարգացնելու շուկաներ են, օրինակ, Եգիպտոսն ու Հունաստանը: ՀԱԳՄ նախագահի հավաստմամբ, Թուրքիայի հետ մեր առեւտրաշրջանառության ծավալները, չնայած թուրքական կողմի էմբարգոյին, մեծանում են: Այդուհանդերձ, Հայաստանի գործարարները խնդիրներ են ունենում այլ երկրներ այցելելիս:

Արսեն Ղազարյանը հայտնեց, որ շատ հաճախ հայկական ընկերությունը մասնակցում է արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսին, բայց նրա ղեկավարը չի կարողանում մեկնել այդ երկիր եւ իր գործարար շահը պաշտպանել: Նա միջոցառմանը ներկա դեսպանատների ներկայացուցիչների ուշադրությունը հրավիրեց այս հանգամանքի վրա, առաջարկելով միության աջակցությունն այդ հարցում: ՀԱԳՄ նախագահը տարօրինակ համարեց այն հանգամանքը, որ մի կողմից Հայաստանը միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչվում է որպես բիզնեսի եւ ներդրումների համար նպաստավոր պայմաններ ունեցող երկիր, մյուս կողմից հայ գործարարները դժվարություններ են ունենում այլ երկրներ մեկնելիս վիզաների հարցում: Նա կոչ արեց Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին տարբերակված մոտեցում ցուցաբերել պաշտոնի միգրանտների եւ գործարարների միջեւ, վիրավորական համարելով այն փաստը, որ Հայաստանի գործարարները երկրից հնարավոր փախչողի պիտակավորում են ստանում:

Լրագրողների հետ զրույցի ժամանակ Արսեն Ղազարյանը ցանկալի համարեց, որ հայ գործարարների համար լինեն հեշտացված վիզաներ, որպեսզի նրանք չկանգնեն խոչընդոտների առջեւ:

Միաժամանակ նշենք նաեւ, որ Հայաստանում հավատարմագրված դեսպաններից եւ դեսպանատների ներկայացուցիչներից քչերն էին մասնակցում երեկվա հանդիպմանը:

ԱԲԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Խաբեության բիզնես

1-ին էջից

Նա բողոքում է նաեւ, թե իրեն խաբած ողջ հանցավոր խմբին՝ Արթուր Գրիգորյանին, Մարգարիտ Մելիքսետյանին եւ Ռուզաննա Ներսիսյանին որտեղ թաքցրին եւ ինչո՞ւ մնաց միայն Վիգեն Արզումանյանը, որի հանդեպ հարուցված քրեական գործը մի տարի պահեցին եւ անհիմն ձեւով կարճեցին դատախազության մի զանգով:

Ըստ Ֆլորայի՝ քաղաքում մի քանի այսպիսի խմբեր են գործում, որոնց ձեռքին դրամ կա եւ կարծես ղեկավարվում են մեկ կենտրոնից. թե չէ՝ ո՞վ կուներար այդքան փող՝ խաբեության բիզնեսում ներդրում անելու, իբր տոկոսով փող են մարդկանց բաժանում, հետո էլ բնակարանները խաբեությամբ վերցնում են:

Առանց բնակարանի էր մնացել նաեւ Նորի 4-րդ զանգվածի, 2-րդ հատվածի 35 շ., 10 բնակարանի բնակչուհի Սիրանուշ Դանիելյանը, որն ամուսնու մահվան առիթով երկու ամիս բացակայելով՝ վերադարձին իր բնակարանը վաճառված է տեսել: «Լուսարեւ» ՍՊԸ-ի տնօրեն Լյովա Եսայանը, Գագիկ Եսայանը՝ նրա տղան եւ Հասմիկ Պապոյանը խարդախությամբ տիրացել են Սիրանուշ Դանիելյանի բնակարանին, երբ անգամ առք ու վաճառք են արել:

Անժելա Ոսկանյանն իր բողոքի ցույցով աջակցում է հաշմանդամ ամուսնուն. իրենց բնակարան պաշտոնի մտած մարդուն չեն կարողանում վտարել, դեռ ամուսնու վրա էլ քրեական գործ են ուզում սարքել՝ իբր տունը վաճառել է, մինչդեռ նա եւ ամուսինը խաբեության զոհեր են պարզապես:

Նորագավիթի 12 փ. 3-րդ նրբ., 2-րդ տան բնակիչ, հաշմանդամ Թորգոմ Դավթյանի խոսքերով՝ իրեն քաղաքացիական, ոստիկանության կողմից ահաբեկում են. «Իմ ունեցած հողի 200 քմ-ն վերցրել են, կադաստրի հիմնարկից իմ սեփականության վկայագիրը չեն տալիս. 800 քառ մետր հողակտոր պետք է լիներ՝ 520 է», դառնանում է նա:

Այս մարդիկ իրավական քաջքուկի եւ իրավական գիտելիքների պակասի զերիներն են, ենթարկվել են չարամիտ խաբեության եւ չեն կարողանում իրենց ունեցվածքը հետ բերել, իսկ մեր իրավապահ համակարգն էլ չի կարողանում կամ չի ուզում օգնել նրանց:

Ամեն դեպքում՝ հացադուլի նման ծայրահեղ միջոցը խոսում է այն մասին, որ մարդիկ կորցրել են հույսը իրավապահ համակարգի մասին, նրանք առանց քաղցելու խոսում էին կաշառքի դերի, անգամ փաստաբանների կողմնակալության մասին: Նրանց խնդիրները լուծել է պետք:

Ս. Խ.

Հետաքննող լրագրողների «Ռեգիոն» կենտրոն

Հոդվածները տպագրվում են «Կոնսորցիումի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում՝ «Conciliation resources» կազմակերպության աջակցությամբ եւ բրիտանական կառավարության ֆինանսավորմամբ: Հոդվածագրերի տեսակետները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետների հետ:

«Հայաստանի զարգացման միակ ճանապարհն անցնում է ժողովրդավարության միջով»

Հարցազրույց իրավաբանական գիտությունների թեկնածու ***Հրայր Թովմասյանի*** *հետ*

- Հայաստանում իրական բազմակուսակցական համակարգ ձեւավորվե՞լ է: Ո՞րն է գործող քաղաքական կուսակցությունների հիմնական տարբերությունը, նրանց ազդեցության աստիճանը: Պայմաններ ստեղծվե՞լ են նրանց գործունեության համար:

- Եթե ընդունենք հարցի ձեւական կողմը՝ կա՞ արդյոք Հայաստանում բազմակուսակցական համակարգ, ապա պիտի ասենք, որ մեզ մոտ բազմակուսակցական համակարգն իր բումն է առրում: Մի հումոր եմ ուզում հիշել. հայերին հարցնում են՝ որքա՞ն է ձեր բնակչությունը, ասում են՝ չինացիների հետ մի միլիարդից ավել ենք, չինացիներին հարցնում են՝ քանի՞ կուսակցություն ունեք, ասում են՝ հայերի հետ 100-ից ավելի: Հայաստանում այսօր կուսակցությունների թիվը 100-ից ավելի չէ, գրանցվածներն ընդամենը 74-ն են, բայց երբեմն կասկով կարող ենք նկատել, որ այդ կուսակցությունների մասին դրանց նախագահների ընտանիքների անդամներն էլ չգիտեն: Եթե բազմակուսակցությունն ընդունում ենք այդ պիսին՝ թղթի վրա եղած կուսակցությունների գոյություն, ապա դրանք բավականին լիչ են: Քանի որ մեր խորհրդարանում, որպես կանոն, ներկայացվում են 6-7 կուսակցություն, մնացածի գոյության խնդիրը կարծես թե կասկածի տակ է դրվում:

Իրական բազմակուսակցական համակարգի ձեւավորմանը խոչընդոտող հիմնական գործոններից մեկը ընտրություններն են, որովհետեւ կուսակցությունները ձեւավորվում, կայանում են ընտրությունների միջոցով: Եթե կուսակցությունը, որը, ըստ էության, հասարակության որոշակի շրջանի քաղաքական ուժերը համախմբող, քաղաքական համակարգը ներկայացնող միավորում է, պահանջարկ չունի, ապա շատ արագ պետք է քաղաքական թատերաբեմից դուրս գա:

Ուշագրավ է, որ քաղաքական թատերաբեմում եղած կուսակցությունները բավականին լիչ են միմյանցից տարբերվում: Ծայրահեղ դրսեւորումներ, կարծես թե, չկան, եւ ասպարեզում երեւում են ավելի հավասարակշռված կուսակցությունները: Բայց մենք ունենք մարքսիստական, ազգայնական, մինչեւ իսկ աջ լիբերալ կուսակցություններ, որոնց մասին շատ քչերը գիտեն: Հայաստանում ընտրապայքարը դեռեւս չի ընթանում գաղափարների, ծրագրերի շուրջը եւ, ցավոք, կուսակցությունների մեծամասնությունն առավելապես անձի շուրջը ձեւավորված քաղաքական ուժեր են: Կարող ենք անգամ թատերաբեմում եղած կուսակցությունների առաջին կամ երկրորդ դեմքերին հանել եւ հարց է՝ այդ կուսակցությունը կմնա, թե՞ ոչ: Սա, անշուշտ, ցավալի է, որովհետեւ միայն ընտրությունների միջոցով կարող են ձեւավորվել կայուն քաղաքական ուժեր, որոնք հետագայում կարող են դերակատարություն ունենալ:

Կրկնում եմ, կուսակցությունների լավագույն սելեկցիան ընտրություններն են, եւ ընտրությունների միջոցով է միայն, որ հնարավոր է այդ բնական ընտրությունը կատարել եւ հասնել ինչ-որ նպատակի: Հայաստանում նորաստեղծ կուսակցությունները շատ արագ կարող են առաջիկա ընտրություններին մասնակցել եւ ձայներ ստանալ, եւ դա նորություն չէ. 1995 թ. «Շամիրամն» էր, 1999 թ. «Օրինաց երկիրն» էր, 2003 թ. «Միավորված աշխատանքային կուսակցությունն» էր, հիմա էլ՝ «Բարգավաճ Հայաստանը»: Ես որեւէ վատ բան չունեմ նրանց մասին ասելու, բայց սա նշանակում է, որ կուսակցական համակարգը կայացած չէ: Աշխարհում չի կարող նման բան լինել, որ կայացած կուսակցական, քաղաքական համակարգ ունեցող պետության ներսում մի քանի ամիս կամ մեկ տարի առաջ ստեղծված քաղաքական ուժը միանգամից քաղաքական խաղադրտի մեծ հավակնություն ունենա, բայց մեզ մոտ դա դեռեւս կա, եւ խնդրի լուծումը պետք է փնտրել հենց այդտեղ:

Ընտրություններից առաջ երկու դաշտում էլ պետք է ընթանա որոշակի համախմբում: Այսինքն՝ կան միեւնույն մտածելակերպի, միեւնույն քաղաքական հայացքների, քաղաքական այս կամ այն ուղղվածությանը դավանող քաղաքական ուժեր եւ կուսակցություններ, որոնց չմիավորվելը որեւէ բանով չի հիմնավորվում: Միայն ուժեղ, կայացած քաղաքական կուսակցությունների ներկայությունը կարող է պետության ներսում երաշխավորել տեղական, կայուն, կանխատեսելի զարգացում: Ողջ աշխարհում կայուն քաղաքական համակարգ ունեն այն երկրները, որտեղ կան խոշոր կուսակցություններ, իսկ այդ կուսակցությունները ձեւավորվում կամ խոշորանում են ընտրությունների միջոցով:

Կուսակցության գործունեության առաջին պայմանը քաղաքական իրավունքների առկայությունն է՝ խոսքի, հանրահավաքների, քաղաքական միավորումների ազատությունը: Սրանք Հայաստանում կան, թե՞ չկան: Մեծ վերապահումով եմ մոտենում, գնահատական տալը բավական դժվար է, մանավանդ խոսքի ազատության առումով: Նույնիսկ եթե կան կուսակցություններ, որոնք կարող են տեղ գտնել հասարակության մեջ, գնահատվել, ապա կա մյուս խնդիրը՝ արդյոք ազատ, հրապարակային բանավեճերն ու քննարկումներն առկա՞ են ասելիքը տեղ հասցնելու համար: Հայաստանում քաղաքական կյանքը եւ ընդհանրապես ամեն ինչ կենտրոնացված են Երեւանում: Քաղաքական քննարկումներն այս կամ այն մամուլի ակումբից այն կողմ չեն անցնում: Հետեւաբար, այնքան էլ հիմնազուրկ չեն քաղաքական որոշ կուսակցությունների պնդումները, թե զրկված են իրենց ասելիքը տեղ հասցնելու հնարավորությունից: Բայց սա հարցի ընդամենը մի կողմն է, կուսակցությունների գործունեության համար պետք է ապահովված լինեն ազատ, արդար ընտրություններ անցկացնելու բավարար պայմաններ: Մեզանում դա չկա կամ կայացման փուլում է:

Հաջորդը տեղական ինքնակառավարման մարմինների համակարգն է: Մեզ մոտ քաղաքական կուսակցություններն իրենց պատվից վեր են համարում այդ ընտրություններին մասնակցելը, իսկ այդ

մարմիններից հետո երկրորդ աստիճանն արդեն խորհրդարանական ընտրություններն են, հաջորդը՝ հանրապետության նախագահինը: Այսինքն՝ որոշակի միջին օղակ, որտեղ կարող են քաղաքական կուսակցությունները մասնակցել, իրենց աշխատանքով դրսեւորվել, ստանալ հասարակության վստահությունը, հավակնել ավելի բարձր պաշտոնների, կարծես մեզանում բացակայում է: Խնդիրը նաեւ այն է, որ մեզ մոտ տեղական ընտրությունները միաժամանակ չեն կատարվում: Եվրոպական երկրներում տեղական ընտրությունների նշանակությունը համապետականից պակաս չէ, եւ ամբողջ քաղաքական համակարգը ուշադիր հետեւում է, թե տեղական ընտրությունների ժամանակ որ կուսակցությունը հաղթանակ տարավ: Մեզ մոտ այլ գործընթաց է՝ ով ուզում է, թող հաղթանակ տանի, հետո նա կանդամագրվի իշխող քաղաքական կուսակցությանը: Բնականաբար, սա բարենպաստ պայման չէ կուսակցությունների կայացման համար, այսինքն՝ հինգ տարվա ընթացքում քաղաքական կուսակցությունը, կարծես թե, անելիք չունի, նա պետք է սպասի մինչեւ հերթական ընտրությունը, որ նորից մասնակցի: Այդ ընթացքում դրսեւորվելու, ուժերը չափելու այլ հնարավորություն չունի, հակապես, եթե խորհրդարանում էլ ներկայացված չէ:

- Իրականում ի՞նչ նշանակություն ունեն ընտրությունները քաղաքական կուսակցությունների եւ հասարակության համար:

- Ընտրությունների դերը մեր քաղաքական համակարգում բավական մեծ է: Ի տարբերություն այլ երկրների, որտեղ ընտրություններն այդքան մեծ նշանակություն չունեն, որովհետեւ կա կայացած քաղաքական համակարգ, եւ այս կամ այն քաղաքական ուժի իշխանության գալը տվյալ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում շատ քիչ բան է փոխում: Մարդն այդպիսի երկրներում ունի իր սեփականությունը, որը պաշտպանված է, կա անկախ դատական իշխանություն, ունի իրավունքների որոշակի ծավալ, որոնք երաշխավորված են սահմանադրությամբ, եւ ով ուզում է, թող գա իշխանության: Լավագույն դեպքում նոր իշխանությունները կարող են հարկերը մի փոքր ավելացնել կամ պակասեցնել, կամ տնտեսության մի ճյուղին ավելի մեծ ուշադրություն դարձնել, քան մյուսին: Եվրոպական երկրներում մեծ թվով քաղաքացիների ընտրություններին չմասնակցելու երեւույթը պատճառաբանվում է հենց դրանով: Հայաստանում ընտրություններն այն առաջնային, հիմնական աղբյուրն են, որից կարող են սկիզբ առնել մյուս բոլոր դրական գործընթացները: Եվ դա այդպես է, քանի որ մյուս ինստիտուտները գտնվում են ձեւավորման փուլում, մենք ունենք խորհրդային տարիների պատմական անցյալը, երբ ընտրությունները որեւէ դեր չեն ունեցել, եւ մարդ-պետություն փոխհարաբերություններում միշտ ճիշտը եղել է պետությունը, մարդն իր բոլոր իրավունքները ստացել է պետությունից, եւ այն, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, թղթի վրա է եղել: Ամենակայացած երկրում ամենավաս ընտրություններով ընտրված նախագահն ավելի լավն է, քան չընտրվածը, որովհետեւ ընտրությունը որոշակի վստահություն է ներշնչում այդ մարդու նկատմամբ, հասարակությունը անհրաժեշտության դեպքում պատրաստ է հանդուրժելու կամ կրելու զրկանքներ հանուն պետության: Հակառակ պարագայում հասարակությունը չի հանդուրժելու, եւ նախագահի պաշտոնավարումն ընկնելու է հարցականի տակ: Հայաստանում ընտրությունների դերը շատ ու շատ ավելի մեծ է. եթե չկան այդ ընտրությունները, ապա մնացած բոլոր խնդիրները երկրորդական պլան են մղվում:

Հայաստանում ընտրությունների դերակատարությունը մեծանում է նաեւ նրանով, որ այստեղ, ինչպես մյուս նորանկախ պետություններում, դեռեւս ընթանում է սեփականության վերաբաշխման գործընթացը: Ընտրությունների միջոցով իշխանություն ունենալը շարունակում է մնալ այդ սեփականության վերաբաշխմանը մասնակցելու ամենամեծ հնարավորությունը: Քանի դեռ չկան ինստիտուցիոնալ այլ երաշխիքներ, որոնք թեզ հնարավորություն կտան պաշտպանելու քո սեփականությունը, միակ միջոցը իշխանություն ունենալն է: Մեր պարագայում ընտրությունների գինը շատ ու շատ ավելի մեծ է: Ուստի, քաղաքական հավակնություն են ցուցաբերում մարդիկ, ովքեր քաղաքականության հետ ոչ մի կապ չունեն: Հոետորական հարց հնչեցնեմ՝ ինչո՞ւ Քըրքորյանը կամ Սորոսը, կամ Բիլ Գեյթսը չեն հավակնում սենատոր դառնալ, պարզապես նրանք դա իրենց գործը չեն համարում: Որպեսզի մեզ մոտ ամեն ինչ իր տեղն ընկնի, պետք է արագացվի սեփականության վերաբաշխման գործընթացը:

Մի հետաքրքրական վերլուծություն կա. վերջին 30 տարում զարգացել են ոչ թե այն երկրները, որոնք նավթ, գազ ունեն կամ լավ աշխարհագրական դիրք, այլ այն երկրները, որոնք ճիշտ օրենքներ են ընդունել: Այսօր խորհրդարանում ներկայացված մարդկանց նայելիս մտահոգություն ես ունենում՝ ինչպիսի՞ օրենքներ են ընդհանրապես ընդունվելու: Ընտրությունները քաղաքական կոնֆլիկտները խաղաղ ճանապարհով լուծելու միջոց են: Ամբողջ աշխարհում քաղաքական հակասություններն արդար ընտրությունների ճանապարհով են լուծվում, եւ մրցակից կուսակցությունները միմյանց ձեռք են մեկնում, ինչը նշանակում է՝ հանդուրժում է, որ ինքը քաղաքական փոքրամասնություն է եւ պետք է պայքարի, որ դառնա մեծամասնություն: Այսինքն՝ կոնֆլիկտ կար, եւ կոնֆլիկտն իր հանգուցալուծումը ստացավ ընտրությունների միջոցով: Մեզ մոտ հակառակ երեւույթն է՝ կոնֆլիկտ կար, եւ այն առավել սրվում է յուրաքանչյուր քաղաքական ընտրությունից հետո: Ընտրությունների միջոցով է, որ պետք է հաստատվի քաղաքացու այս երկրին տեր լինելու ինստիտուտը: Կեղծված ընտրությունները դրա հնարավորությունը չեն կարող տալ: Քանի դեռ հայ մարդն այս երկրի տերը կարող է համարել իշխանավորներին եւ մտածել, որ ոչինչ կախված չէ իրենից, տեր չի զգա իր հողում եւ ընտրություններից հետո կարող է ընտրել արտագաղթի ճանապարհը, ինչն ամենադյուրինն է: Ուստի, ընտրությունները ժողովրդին իշխանության տեր դարձնելու առաքելություն ունեն:

- Քաղաքացիներն ակտի՞վ են ընտրությունների ժամանակ, ինչպե՞ս են օգտագործում իրենց ձայնի իրավունքը:

- Մարդու ձայնի իրավունքը 70-ից ավելի տարի եղել է ապրիորի, նրա ձայնից ոչինչ կախված չի եղել: Հիմա ինտերպիայով դա բարունակվում է, նա իր ձայնի արժեքը չի հասկանում, քաղաքական, իրավական կուլտուրայի որոշակի ցածր աստիճանի պատճառով չի կարողանում ամբողջությամբ գնահատել եւ տեսնել իր ձայնի եւ իր կյանքում փոփոխությունների միջեւ եղած կապը: Երբ չի տեսնում (այսինքն՝ երբ մտածում է, որ իր ձայնով ոչինչ էլ չի փոխվելու), նա որեւէ ակտիվություն չի կարող ցուցաբերել: Նկատի ունենանք նաեւ մեկ այլ հանգամանք՝ ընտանիքի ֆետիշացումը. հայ մարդն իր ձայնը վաճառելով եւ դրա դիմաց որոշակի գումար ստանալով ուզում է նպաստել իր ընտանիքի բարեկեցությանը: Սա էլ է նվազեցնում նրա ակտիվությունը: Այս առումով ակտիվության մասին վերապահումով պետք է խոսել: Հայ ժողովուրդն, իմ կարծիքով, ակտիվ չէ, նա պատրաստ է քաղաքական ընտրությունների ժամանակ, դեմ լինելով այս կամ այն իշխանությանը, կողմ քվեարկել ընդդիմությանը, բայց դրանից հետո նա ակտիվություն չի ցուցաբերում իր իրավունքներին տեր կանգնելու համար: Միգուցե այստեղ էլ պատճառները տարբեր են՝ հոգնել է ամեն ինչից, պայքարի ունակ չէ կամ տեսել է այդ պայքարը ճնշելու եղանակներ եւ չի ուզում գլուխը ցավի մեջ գցել:

Նաթան Իմաստունն ասում էր, որ վատ քաղաքական գործիչներն ընտրվում են ընտրություններին չմասնակցող լավ քաղաքացիների կողմից: Սա կարող է կոչ լինել բոլոր ընտրողներին, որպեսզի ամեն դեպքում մասնակցեն ընտրություններին, իրականացնեն իրենց երկրին տեր լինելու իրավունքը: Կա որոշակի քաղաքական ակտիվ զանգված, որն ընդգրկված է քաղաքական կուսակցություններում, բայց ընդհանուր առմամբ քաղաքական ակտիվությունը փոքր է Հայաստանի համար:

Ֆրանսիացին ասում է՝ «Je ne fais pas de politique» (ես քաղաքականությամբ չեմ զբաղվում), որովհետեւ նրա համար միեւնույն է, թե

ՈՒԵՇԻՄՔ

ով կգա իշխանության, մեզ համար, կարծես թե, միեւնույնը չէ: Այս ակտիվությունը պետք է մեծացնել, եւ այստեղ դերակատարություն ունեն քաղաքական ուժերը, որպեսզի կարողանան իրենց հետեւից որոշակի խումբ մարդկանց տանել:

- Ընտրությունները ժողովրդավարակա՞ն են, ի՞նչ դեր են խաղում արտաքին ուժերը ընտրությունների ժամանակ:

- Ըստ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների Հայաստանի ընտրությունների վերաբերյալ դիտարկումների՝ դրանք, ցավոք, դեռեւս ժողովրդավարական չեն գնահատվում: Հայաստանում կամքի արտահայտումը կամ ժողովրդի ձայնով ձեւավորված իշխանության ինստիտուտը դեռեւս ամբողջությամբ չի կայացել: Ժողովրդավարական ընտրությունների մի քանի չափանիշներ կան, որոնց մի մասով, կարծես թե, Հայաստանը համապատասխանում է պահանջներին, օրինակ՝ մեզ մոտ ընտրատեղամասերից թեկնածուներին դուրս հանելու երեւույթը չկա, բայց դեռեւս կան նաեւ այլ քողարկված երեւույթներ, որոնք չեն ապահովում ընտրությունների ազատությունն ու հավասարությունը: Ժողովրդավարությունը վաղուց է դադարել միայն այդ երկրների ներքաղաքական խնդիրը լինելուց, որովհետեւ մենք ապրում ենք այլ պետությունների «հարեւանությամբ», որտեղ ժողովրդավարական ընտրություններն ավանդույթ են դարձել եւ պարզապես չեն հանդուրժում իրենց կողքին գտնվող այն երկրներին, որտեղ ժողովրդավարությունը թղթի վրա է: Այդ պետությունները խնդիրներ են առաջացնում իրենց համար, եւ սա է պատճառը, որ միջազգային հանրությունը ժողովրդավարությունը դարձրել է իր գլխավոր առաքելություններից մեկը: Խոսքը, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի եւ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության մասին է, որոնք հետեւում են Հայաստանի ընտրություններին:

Սպասել, որ դրսից գալու են եւ այստեղ ժողովրդավարական ընտրություններ են անցկացնելու, անհեթեթ է, բայց այդ կազմակերպությունների դերն ընդհանրապես թերագնահատել չի կարելի, որովհետեւ դրանք կողքից դիտող աչք են, եւ դրան կարող են հաջորդել որոշակի սանկցիաներ:

Այս անգամ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու խաղադրույքը շատ ու շատ ավելի մեծ է, քան մյուս դեպքերում: Առաջիկա ընտրությունների ժողովրդավարության աստիճանից են կախված երկու մեծ ծրագրերի ճակատագրերը՝ «Նոր հարեւաններ» եւ «Հազարամյակի մարտահրավերներ»: Այս երկու ծրագրերն իրենց տնտեսական ու քաղաքական բնույթով ուղղված են հետեւյալին՝ մեր հարեւան երկրներում չպետք է լինեն ավտորիտար պետություններ, չպետք է արտագաղթ լինի դեպի մեր երկրներ: Այդ երկրներում պետք է լինի այնպիսի տնտեսական շուկա, որտեղ մեր ներդնողները կարող են ազատորեն գալ եւ ներդնել, իսկ դրան կարող են հասնել միայն ժողովրդավարական ընտրությունների միջոցով: Ամենագլխավորը երկրի ներսում առկա քաղաքական ուժերի ցանկությունն է՝ անցկացնել ժողովրդավարական ընտրություններ:

- Ինչպե՞ս են մեր երկրում վերաբերվում ընտրություններին միջազգային դիտորդների տված գնահատականներին: Ընդհանրապես, Հայաստանի ընտրություններում ի՞նչ դեր է խաղում միջազգային դիտորդների ինստիտուտը:

- 1995 թ. ընտրություններից սկսած՝ այդ գնահատականները բավականին ցավալի են եղել: Այդ գնահատականները նաեւ վերջին ընտրություններին էին վերաբերում: Դրա հետեւանքները կարող են քաղաքական եւ տնտեսական լինել այն ասյանների կողմից, որոնք դիտարկում են այդ ընտրությունները: Ընդհանրապես, կա պետությունների զարգացման երկու ճանապարհ. պետությունը կամ պետք է լինի ժողովրդավարական, կամ ավտորիտար, տոտալիտար, բայց այդ դեպքում նա պետք է հարուստ լինի բնական մեծ պաշարներով, որոնք կարող են լինել ժողովրդավարության այլընտրանքը: Հայաստանը նման շքեղություն չի կարող թույլ տալ իրեն, Հայաստանի զարգացման միակ ճանապարհն անցնում է ժողովրդավարության միջով: Մեր պարագայում սա շատ ավելի է կարեւորվում, քան այն պետություններում, որոնք կարող են բնական պաշարներ ունենալ, երկնիշ տնտեսական աճ:

Անշուշտ, դիտորդների ներկայությունը որոշակի զսպաշապիկ է, որոշակի զգոնություն է բոլոր այն մարդկանց համար, ովքեր մտածում են ընտրակեղծիքների մասին, բայց դիտորդների ներկայությունն ամբողջությամբ չի կարող լուծել ընտրակեղծիքների հարցը, դիտորդական ինստիտուտն ընդամենը գործիքներից մեկն է, որը կոչված է նպաստելու ընտրակեղծիքների լուծման խնդրին: Միշտ ասում եմ՝ կա ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը նպաստող երեք գործոն՝ իշխանությունների կամքը, հասարակության մեջ առկա որոշակի քաղաքական, իրավական կուլտուրան, ընտրական օրենսդրությունը: Սրանցից ցանկացածի բացակայությունը ժողովրդավարական ընտրություններ չեն ապահովելու այս երկրում: Միջազգային դիտորդների դերակատարությունը այդ երեք կարեւոր գործոնների մեջ չի մտնում:

Հարցազրույցը՝
ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

«Կեղծարարությունները կատարվում են գործադիր իշխանության ակտիվ միջամտությամբ»

Հարցազրույց «Հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ նախագահ ***Էլդար Իսմայլովի*** *հետ*

- Ադրբեջանում ձեւավորվե՞լ է իրական բազմակուսակցական համակարգ, որո՞նք է գործող քաղաքական կուսակցությունների հիմնական տարբերությունները, նրանց ազդեցության չափը: Արդյոք ստեղծվել են պայմաններ նրանց գործունեության համար:

- Ձուլ իրավաբանական տեսանկյունից՝ կարելի է ասել, որ Ադրբեջանում ձեւավորվել է բազմակուսակցական համակարգ: Բայց մեր երկրի կուսակցությունները գտնվում են անհավասար պայմաններում: Անկասկած, առավել նպաստավոր պայմաններ ստեղծված են իշխող «Յենի Ազերբայջան» կուսակցության եւ շատ ավելի նվազ պայմաններ՝ մնացած կուսակցությունների համար: Բացի այդ, խիստ թույլ է բազմակուսակցական համակարգի սատարման մեխանիզմը: Կարելի է վստահորեն պնդել, որ փոքրամասնություն կազմող կուսակցությունները, որոնք «Յենի Ազերբայջանի» «կրտսեր եղբայրներն են», իրենց լավագույն օրերը չեն ապրում: Դրա պատճառն այն է, որ կուսակցություններն ի վիճակի չեն իրենց նյութապես ապահովել: Ուստի՝ ոչ այդպիսի կուսակցությունների քանակն է ավելանում, ոչ էլ դրանց անդամների քանակը: Այսօրվա դրությամբ, բացի իշխող եւ ընդդիմադիր կուսակցություններից, Ադրբեջանում կա կուսակցությունների մի երրորդ խումբ, որը հստակ կեցվածք չունի երկրի առջեւ ծառացած խնդիրների նկատմամբ: Այդ խումբն ունի բավական մեծաթիվ անդամներ, բայց ինձ համար մեծ զարմանք է մնում, թե նրանք ինչ գաղափարներով են առաջնորդվում: Ջեւականորեն հանդես գալով որպես ընդդիմադիր՝ դրանք, ըստ էության, իշխանամետ կուսակցություններ են: Իմ կարծիքով, հենց այս կուսակցություններն են կոչված՝ Ադրբեջանում ստեղծելու բազմակուսակցականության պատրանք: Կա եւս մի հանգամանք, որի մասին հարկ է խոսել: Ինձ թվում է, որ հնացել է կուսակցությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական բազան: Ժամանակին ընդունված «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքը կարիք ունի վերամշակման եւ ներկա պայմաններին հարմարեցման: Բայց այս հնացած օրենքի մեջ փոփոխություններ մտցնելու մասին միտքն անգամ հարուցում է հայրենի ընդդիմության ներկայացուցիչների անթաքույց վրդովմունքը: Եվ դա բնական է: Չէ՞ որ ընդդիմադիրները ենթադրում են, որ օրենքում որոշակի փոփոխություններ մտցնելուց հետո, իրենց՝ առանց այդ էլ ոչ նախանձելի վիճակը էլ ավելի կվատանա: Իհարկե, ներկա իրողությունների պայմաններում իրադարձությունների նման ընթացքը չի բացառվում, քանզի երկրի ներքաղաքական կյանքի ամենամեծ խնդիրներից մեկը չափից շատ թշնամանքն է ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների եւ իշխող «Յենի Ազերբայջանի» միջեւ: Ցավոք, երկու կողմերն էլ չափից շատ ժամանակ են վատնում խոսակռվի եւ հրապարակային անվանարկումների վրա: Ավելին, հաճախ ընդդիմության ներկայացուցիչներն անհաշտ բանավեճի մեջ են մտնում հակաիշխանական ճամբարի՝ իրենց, իբրեւ թե, բնական դաշնակցի հետ: Ցավոք, ստիպված ենք նաեւ արձանագրել, որ ընդդիմադիր կուսակցությունները չեն ստեղծել իրենց կայունությունն ապահովող մեխանիզմներ: Ուստի՝ այսօր Ադրբեջանում գործող բազմակուսակցական համակարգը մեծ չափով արդյունք է արհեստական ջանքերի: Այո՛, իշխանության ներկայացուցիչները շահագրգռված չեն, որ ընդդիմադիր կուսակցություններն ասպարեզից դուրս գան: Այո՛, իշխանությունը որոշակի ջանքեր է թափում, որպեսզի ընդդիմադիր կուսակցությունները շարունակեն գոյություն ունենալ, բայց ոչինչ չի անում դրանց ամրապնդման համար, եւ դա միանգամայն բնական է: Չէ՞ որ իշխանությանն առաջին հերթին մտահոգում է իր դիրքերի ամրապնդումը, եւ այն շահագրգռված չէ իրոք ուժեղ

ընդդիմախոսի առաջացմամբ: Բայց ընդդիմադիր կուսակցությունների եւ, մյուս կողմից, իշխող ու իշխանամետ կուսակցությունների ծրագրերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց միջեւ առկա տարբերությունն այնքան էլ մեծ չէ: Սա խոսում է այն մասին, որ հայրենի կուսակցությունները չունեն լուրջ գաղափարաբանական հիմք: Համենայն դեպս, ես չեմ կարող Ադրբեջանում գործող կուսակցությունները դասակարգել «ձախերի», «աջերի» եւ «կենտրոնամետների»: Այս պայմաններում նույնիսկ Կոմունիստական կուսակցությունը, որը կարծես թե անհետացել էր, հոչակելով անցյալի գինանոցից փոխ առած սկզբունքներ, կարող է հայտնվել ավելի շահեկան դիրքում, քան իրարից ոչնչով չտարբերվող կուսակցությունները, որոնց գաղափարախոսական հիմքը մնում է խիստ աղոտ:

- Իրականում ի՞նչ նշանակություն ունեն ընտրությունները քաղաքական կուսակցությունների եւ հասարակության համար:

- Տանկացած ընտրության հետ մարդիկ կապում են առկա իրադրության փոփոխության հույսեր: Մինչդեռ հասարակության կյանքի համար Ադրբեջանում անցկացվող ընտրություններն իրական նշանակություն չունեն: Եվ դա հասկանալի է, քանի որ Ադրբեջանում ընտրությունների արդյունքները հայտնի են նախօրոք: Հետեւաբար, մնացած կուսակցությունների պարտությունը եւս կանխորոշված է: Արդյունքում ընտրազանգվածի այն մասը, որը նախկինում հույս ուներ, թե երկրում տեղի կունենան քաղաքական փոփոխություններ, այժմ արդեն կորցրել է հույսը, թե նման փոփոխությունների կարելի է հասնել ընդդիմության միջոցով: Վերջինս ի ցույց է դրել իր կատարյալ անօգնականությունը ներկա իշխանության հետ պայքարում եւ գործնականում կորցրել իր նշանակությունը: Ցավոք, հայրենի ընդդիմությունը, դասեր չքաղելով նախկին պարտություններից, նախանձելի համառությամբ շարունակում է օգտագործել քաղաքական պայքարի նույն մեխանիզմները, որոնք նախկինում նրան հաջողության չեն հասցրել: Ինչ վերաբերում է իշխանությանը, ապա այն արդեն գտել է սատանա էվոն պահելու հստակ մեխանիզմներ եւ հանգիստ գործադրում է դրանք՝ ստեղծելով սեփական դիրքերի անսասանության երեւութականություն, թեեւ ես համաձայն եմ, որ հաճախ այդ սատանա էվոն պահպանելու մեթոդները չեն համապատասխանում ներկա իրողություններին եւ վերցված են անցյալի զինանոցից:

- Ինչ ակտիվությամբ են քաղաքացիները մասնակցում ընտրություններին, ինչպե՞ս են օգտագործում իրենց ձայնի իրավունքը:

- Ես համաձայն եմ, որ տեղական ընտրություններում բնակչության ակտիվությունը լինում է խիստ ցածր: Բայց դա ունի իր բացատրությունը. մեր քաղաքացիները տեղական իշխանությունների հետ հստակ հույսեր չեն կապում: Մինչդեռ, որքան էլ տարօրինակ թվա, հակառակ նշված բացասական գործոններին, խորհրդարանական եւ նախագահական ընտրություններում Ադրբեջանի քաղաքացիների ակտիվությունը բավական բարձր է: Այո՛, ընտրողների մասնակցության տոկոսների մասին ԿԸՀ-ի հայտարարած տվյալները ոչ միշտ են համապատասխանում իրականությանը, բայց ընտրողների 45-50% մասնակցությունը, ժամանակակից եվրոպական չափանիշների համաձայն, միանգամայն նորմալ արդյունք է: Իսկ Ադրբեջանի խորհրդարանական եւ նախագահական ընտրություններում առկա է ակտիվության այդպիսի մակարդակ: Շատ փորձագետների համար զարմանալի այս երեւույթը, իմ կարծիքով, ունի մի քանի պատճառ: Օրինակ՝ Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունները տեղի են ունենում մեծամասնական համակարգով, որը նախատեսում է կոնկրետ թեկնածուի ընտրություն, այլ ոչ թե ինչ-որ կուսակցության ներկայացուցչի: Եվ բնակչության յուրաքանչյուր հատված կենտրոնանում է մի թեկնածուի վրա՝ առաջնորդվելով անձնական շահերով եւ համակրանքով, հույս ունենալով խորհրդարանում ունենալ սեփական ներկայացուցիչը: Իսկ նախագահական ընտրությունների ժամանակ բնակչության բավական բարձր ակտիվությունն իմքնին հասկանալի է, քանի որ ընտրվում է երկրի ղեկավարը, այսինքն՝ որոշվում է երկրի ապագան:

- Արդյոք ընտրությունները ժողովրդավարակա՞ն են, եւ ի՞նչ դեր են խաղում արտաքին ուժերն ընտրություններում:

- Անկեղծ լինելու դեպքում, չենք կարող Ադրբեջանում անցկացվող ընտրությունները անվանել ժողովրդավարական: Բանը միայն այն չէ, որ մենք չենք վստահում ԿԸՀ-ի հայտարարած թվերին, այլ այն, որ ընտրություններում չափից շատ են պատահում բացահայտ կեղծարարություններ, որոնք կատարվում են գործադիր իշխանության ակտիվ միջամտությամբ: Դա կողքից եւ անթաքույց ձեւով կատարվում է մեր քաղաքացիների եւ ընտրությունների ընթացքին հետեւող տարբեր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների աչքի առաջ: Ինչ վերաբերում է արտաքին գործոնին, ապա այն ազդեցություն չի թողնում Ադրբեջանում անցկացվող ընտրությունների վերջնական արդյունքների վրա, ինչպես նաեւ չի նկատվում արտաքին ուժերի ակտիվ աշխատանքը՝ երկրում առկա վիճակը փոխելու ուղղությամբ: Այդուհանդերձ, կասկածից վեր է, որ Ադրբեջանի քաղաքական իրադրության կայունությունը կախված է արտասահմանյան երկրներից: Շատ հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես խոշոր տերությունների ներկայացուցիչները ընտրությունների նախնական կամ վերջնական արդյունքների ամփոփման ժամանակ անում են հայտարարություններ, որոնք դժվար է համարել կոռեկտ:

- Այս առնչությամբ, խիստ տեղին է հարցն այն մասին, թե, Ձեր կարծիքով, երկրում ինչպե՞ս են վերաբերվում ընտրություններին միջազգային դիտորդների տված գնահատականներին, եւ առհասարակ Ադրբեջանում անցկացվող ընտրություններում ի՞նչ դեր է խաղում միջազգային դիտորդների ինստիտուտը:

- Սկսած 1998 թ. նախագահական ընտրություններից, միջազգային դիտորդների՝ Ադրբեջանում անցկացվող ընտրությունների մոնիտորինգի որակն ավելի ու ավելի է ընկնում: Նրանց մեծամասնությունն ի ցույց է դնում իրենց ոչ կոմպետենտությունը ընտրությունների մոնիտորինգի եւ գնահատման հարցում, իսկ հաճախ պարզապես խուսափում իր վրա դրված պարտականությունները կատարելուց: Ուստի՝ բնակչության մեծ մասը, մեղմ ասած, զգուշավորությամբ է վերաբերվում մեր ընտրություններին միջազգային կազմակերպությունների տված գնահատականներին: Մեր ընտրությունների նկատմամբ միջազգային դիտորդների այդպիսի վերաբերմունքը ձեւավորվել է ասիճանաբար, ընտրությունից ընտրություն: Բայց վերջին տարիներին մեր ընտրությունների նկատմամբ նրանց բացահայտ արհամարհական վերաբերմունքն ուղղակի վրդովեցուցիչ է:

Հարցազրույցը՝
ԱԲՊԵՐ ՀԱՄԼԵՏԻՆԻ

Մշակույթ

«Հրեշը լուսնի վրա»

Նոր բեմադրության առաջնահերթն այսօր՝ Քյոլնում

Այսօր, ժամը 20-ին Քյոլնի Արկադաս (Arkadas) թատրոնում տեղի կունենա Ռիչարդ Կալինոսկու «Հրեշը լուսնի վրա» (Beast on the moon) ներկայացման առաջնախաղը՝ IDENDESMAERZ թատերախմբի դերասաններ Տանյա Բուրթի, Ստեփան Գանթալյանի, Պետեր Պենեակու դերակատարմամբ: Ներկայացման բեմադրությունն իրականացրել է Ֆրիդերիֆ Ֆելբեֆը:

Տարբեր մշակույթների համար բեմահարթակ դարձած Արկադաս թատրոնի կայքէջից քաղած այս տեղեկատվության մեջ հանդիպեցինք նաեւ ենթավերնագրային մի ձեւակերպման՝ Հայաստան-Թուրքիա-Քրդստան ամենաբարձր մակարդակի հանդիպում: (Թե ինչը նկատի ունեն, չեն բացատրել):

Ներկայացումից հետո հանդիսատեսը հնարավորություն կունենա հարցեր ուղղել Բոխումի Սփյուռքի եւ ցեղասպանություն գիտահետազոտական ինստիտուտի ատենադպիր Մեղարդուս Բրեիլին, իսկ մարտի 16-ին՝ ինստիտուտի հիմնադիր տնօրեն դոկ. Միհրան Դաբաղին:

IDENDESMAERZ թատերախումբը նոր է ձեւավորվել՝ հիմնականում Քյոլնում ստեղծագործող ազգ դերասանների ու արվեստագետների համախմբման արդյունքում: Թատրոնը կայուն հասցե չունի, ներկայացումները հանդիսատեսի դահլիճ է հանձնում տարբեր թատրոնների, դղրոցների, թանգարանների բեմերում:

Ըստ կայքէջի, «Հրեշը լուսնի վրա» բեմադրությունը թատերախումբը կներկայացնի 2007-ի հունիսին Դյուսելդորֆի COMITOLOGY, իսկ օգոստոսին՝ Դուիսբուրգի KASSANDRA թատրոնների բեմերում:

Հայոց ցեղասպանության մասին պատմող այս ստեղծագործության բեմական ճանապարհը շատ երկար է՝ ամերիկյանից մինչեւ եվրոպական:

Գերմանիայում «Հրեշը լուսնի վրա» առաջին անգամ ներկայացվել է Վուպերթալի Շիլլեր թատրոնում (1990-2000 թատերաշրջան), միաժամանակ այն խաղարկվել է նաեւ մյունստերյան բեմում: Այնուհետեւ 2001-ի հոկտեմբերին Թյուբինգենում տեղի ունեցավ պիեսի նոր բեմադրություն: Նոյեմբերին Համբուրգի Ամերիկահաուսում 15 անգամ բեմ բարձրացավ Դիդի Դանֆուարդի բեմադրած տարբերակը: 2003 2004 թթ. խաղաշրջանում մյունստերյան Վոլֆգանգ Բորշերս թատրոնը ներկայացրեց իր բեմադրությունը: Բեմադրիչ՝ Մեխթիլդ Հոերշ, բեմի եւ զգեստների նկարիչ՝ Անդրեա Ուհմանն, դերերում՝ Անյա Բիլաբել, Դինու Յանկուլեսկու, Կոնրադ Հալլեր, Ֆիլիպ Սեբաստիան:

Հիշեցնենք, որ պիեսը բացի Գերմանիայից, տարբեր տարիների մեծ հաջողություն է ունեցել Տորոնտոյում, Լոնդոնում, Բուենոս Այրեսում, Լոզանում, Զալցբուրգում, Փարիզում, Պրահայում, Հայաստանում:

ԼՈՒ. Հ

Գերմանիա

13.03.07

«Սայաթ-Նովա» անսամբլը համերգներ տվեց Սիրիայում

Անցած ամսվա վերջերին Սիրիա համերգային ուղեւորության մեկնեց «Սայաթ-Նովա» ազգային երգի անսամբլը, որը հինգ համերգ տվեց Հալեպ եւ Կամիշլի քաղաքներում: Խումբն այդ երկիր էր մեկնել Հալեպի «Կարեն Եփփե» ազգային ճեմարանի շրջանավարտից միության հրավերով:

Համերգների ընթացքում, ինչպես Ամենայրեսի թղթակցին տեղեկացրեց անսամբլի գեղարվեստական ղեկավար, ՀՀ վաստակավոր արտիստ Թովմաս Պողոսյանը, հնչել են հայ դասական ազգային ստեղծագործություններ, առավելապես՝ ազգային-հայրենասիրական երգեր:

Ըստ Թ. Պողոսյանի, առաջին համերգը կայացավ Կամիշլիի «Խորենյան» կրթարանի սրահում, մյուս ելույթները՝ Հալեպի նորակառույց, շքեղ «Եսայան» համերգային դահլիճում: Մեկ համերգ տեղի ունեցավ «Արամ Մանուկյան» ժողովրդային դպրոցական «Սոֆիակ» սրահում: (Ի դեպ, այդ սրահը անվանվել է Հայաստանի՝ երկրաշարժից տուժած Սոֆիակ քաղաքի պատվին):

Համերգներն անցել են լեփլեցուն սրահներում, եւ դա էր պատճառը, որ կազմակերպիչների խնդրանքով Երեւան վերադառնալուց առաջ խումբը մեկ համերգ էլ տվեց Հալեպի հայրենակիցների համար:

Անսամբլը հանդիպումներ է ունեցել Հալեպի մի շարք կրթական եւ այլ հաստատություններում, այդ թվում՝ «Կարեն Եփփե» ազգային ճեմարանում, ՀԲԸՄ-ի Լազար-Նաջարյան դպրոցում, Կիլիկյան, Մխիթարյանների վարժարաններում, ՀՀ հյուպատոսարանում, նրան ընդունել են տեղի Հայ առաքելական եկեղեցու եւ Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդները՝ Շահան արեպիսկոպոս Սարգսյանը եւ Պետրոս արեպիսկոպոս Մրիաթյանը:

«Կամիշլի գնալու ճանապարհին մենք անցանք Եփրատով, իջանք, լվացվեցինք մեր հայրենի ջրերում, լուսանկարվեցինք նրա ափին, քարեր բերեցինք որպես հիշատակ», ասաց Թ. Պողոսյանը:

Վերադարձից հետո անսամբլը մասնակցելու է «Սայաթ-Նովա» մշակութային միության ծրագրերի իրականացմանը, որոնցում ընդգրկված են Աստղ Աստղի եւ մեծանուն երգչուհի Արախյա Գյուլզադյանի՝ 100, Շերամի եւ Մահուբի Գետրգի՝ 150, «Սայաթ-Նովա» ազգային անսամբլի ստեղծման՝ 80 եւ վերստեղծման՝ 15, Ջիվանու անվան ազգային դպրոցի եւ Հայ աստղերի միության 10-ամյակները:

«Բացի մայրաքաղաքից, այդ համերգները կտեղափոխենք նաեւ հանրապետության տարբեր շրջաններ», ասաց պրն Պողոսյանը:

ՎԱՌԻԿ ՄԱՆԹԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆԴՊԲՆԻ թղթ.

«Ազգի» համար

Նվիրում հայկական բանակին

Հայկական բանակի կազմավորման եւ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձների տոնակատարությունների շրջանակում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը ՀՀ մարզերում, ԼՂՀ-ում եւ զորամասերում անց է կացնում տոնական համերգաշար: Երեկ՝ տոնական համերգի մասնակիցները, անվանի երգչուհիները, գեղ. համույթները հիմնադրամի աշխատակազմի հետ հյուրընկալվեցին Արմավիրի մարզի, ԽՍՀՄ կրկնակի հերոս մարշալ Հովհաննես Բաղրամյանի անվան ռազմական զորամասում: Շրջելով զորամասով, զրուցելով զինվորների հետ, ծանոթացան նրանց առօրյային, համտեսեցին զինվորական ճաշը ու ջերմ մթնոլորտում սկսվեց տոնական համերգը, որի ընթացքում զինվորները բեմ բարձրացան ու անբռնազբոսիկ պարեցին երգչուհիներ Ալլա Նավասարդյանի ու Ռուզան Ավետիսյանի հետ: Առանձնահատուկ ուշադրության արժանացավ Սիլվա Յուզբաշյանի ասմունքը, Թաթուլ Ալթունյանի անվ. երգի պարի համույթի եւ այլոց ելույթները:

Տոնական տրամադրությունը թեւառում էր զորամասում, եւ զինվորների ոգեւորությունը գնալով ավելի թեժացավ, երբ համերգի ավարտին բեմ բարձրացավ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն Թամար Պողոսյանը՝ շնորհավորելով ներկաներին հայոց բանակի 15-ամյակի առիթով, զորամասի հրամանատար, գնդապետ Արթուր Բաղրամյանին հանձնեց շնորհավորական ուղերձը: Իսկ 2-րդ գտամարտակի ավագ Դավիթ Հակոբյանը, 4-րդ գտամարտակի սերժանտ Արայիկ Զաքարյանը, տանկային գտամարտակից Արմեն Մխիթարյանը, 1-ին գտամարտակից Արման Հարությունյանը եւ Վաչիկ Շահջանյանը արժանացան հիմնադրամի սահմանած պարգեւներին՝ զինվորական ծառայության ընթացքում օրինակելի վարքի համար: Հրամանատար պրն Բաղրամյանը հատուկ շնորհակալություն հայտնեց արվեստագետներին եւ հիմնադրամին նման տոնական տրամադրություն ու համերգ կազմակերպելու համար, որը «մեծ դեր ունեցավ մեր զինվորների մարտունակությունը բարձրացնելու գործում»:

Համերգից հետո **«Ազգը»** զրուցեց զինվոր Տիգրան Մկրտչյանի (էջմիածնից, որն ընդամենը 3 ամիս է, ինչ ծառայում է բանակում) հետ: Տիգրանը անկեղծ ասաց. «Սկզբից դժվար էր համակերպվել, իսկ հիմա արդեն ընտելացել եմ ու ինձ համար մեծ պատիվ է հայոց բանակում ծառայելը, ուստի ես շատ կարճ ժամանակում կարողացա հաղթահարել հոգեբանական դժվարությունները ու հարմարվեցի զինվորական կյանքին»:

2-րդ վաշտի հրամանատար, կապիտան Ռուբեն Հովսեփյանը տեղեկացրեց, որ զորամասում հիմնականում չորս մոտոհրաձիգային եւ մեկ տանկային գտամարտակներ են գործում, որտեղ 6 ամիս ռազմական վարժանք անցնելուց հետո դառնում են ջոկի հրամանատարներ ու մասնագետներ: Զորամասի սպայական շարքերը հաճախակի համալրվում է Վ. Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտում, ՌԴ-ում եւ արտերկրում հատուկ զինվորական ուսուցում անցած շրջանավարտներով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԻՐՅԱՆ

ԿԱՆԱԴԱ

Հայկական համայնքը պատվում է պրն Դիոնին

«Կանադահայերի համագումարը», որին մաս են կազմում ՀԲԸՄ-Ալեք Մանուկյան դպրոցը, ՀԲԸՄ-ի Մոնրեալի մասնաճյուղը, ՌԱԿ-ը եւ Ս.Դ. Հնչակյան կուսակցությունները, Թեմեյան մշակութային միությունը, Լավալի Սբ. Խաչ եկեղեցին, Մոնրեալի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին եւ Սամբոլի հայերի ընկերակցությունը, մարտի 6-ին պատվել է կանադացի Ազգային կդպակցության նորընտիր առաջնորդ Ստեֆան Դիոնին, տեղեկացնում է այդ առթիվ խմբագրությանն ուղարկված հաղորդագրությունը: Ներկա են եղել 100-ից ավելի ճանաչված հասարակական գործիչներ եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Երեկոյի ընթացքում պրն Դիոնը պարգեւատրվել է «պատվավոր հայ» հուշատախտակով, որին նա արժանացել է երկար տարիներ հայ համայնքի հետ սերտ կապեր հաստատելու եւ Հայ դատի ու Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերում իր անխոնջ աջակցության համար:

Իր պատասխան ելույթում շնորհակալություն հայտնելով պատվասիրության համար՝ նա կոչ է արտահայտվել Հայաստանում կանադական դեսպանության բացմանը, ինչպես նաեւ Կանադայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատում հայ պատգամավորների առաջադրմանը:

Հ. Ծ.

ԼԻԲԱՆԱՆ

«Ուսուցիչների օրը» Հայկազյանում

«Ուսուցիչների օրվա» տոնակատարությունների շրջանակներում մարտի 7-ին Լիբանանի Հայկազյան համալսարանի տնօրինությունը պատվել է լիբանանահայ դպրոցների 26 տնօրենների, որոնք սիրով են ընդունել համալսարանի նախագահ վերապատվելի դոկտ. Պոլ Հայդոստյանի հրավերը՝ հանդիպելու եւ կարծիքներ փոխանակելու հայ համայնքին հուզող հարցերի շուրջը:

«Մենք պետք է պահպանենք հայկական ոգին եւ ինքնությունը, եւ դա պետք է լինի կրթության տալու մեր հիմնական նպատակը», ասել է Հայդոստյանը, նշելով, որ վերջին 5 տարիների ընթացքում կարիքավոր ուսանողներին տրամադրված ֆինանսական օժանդակության գումարը հասել է մոտ 3 մլն դոլարի:

Երեկոյի վերջում տեղի է ունեցել գեղարվեստական մաս, որի ընթացքում արտասանություններով հանդես են եկել ուսանողները:

Հ. Ծ.

Հայկական եւ ամերիկյան ֆիլմարտադրողները համագործակցում են

«Դրամատիկական արվեստների հայկական միության» եւ «Բելմոնտ ոտրդ ֆիլմ» կինոստուդիայի համագործակցությամբ ստեղծվել է «Պատրանք» վերնագրով մի գեղարվեստական ֆիլմ, որի պրեմիերան, ըստ ստացված հաղորդագրության, պետք է կայանա մարտի 25-ին Բելմոնտի «Ստուդիո» կինոթատրոնում: Ֆիլմի ռեժիսորը, սցենարի հեղինակը, պրոդյուսերն ու դերակատարներից մեկը «Էմմի» մրցանակի արժանացած բազմատաղանդ արվեստագետ Մայլզ Գուրջյանն է: Նա ամերիկահայությանը ծանոթ է «Հինգ հոգանոց խումբը» հեռուստատեսային բազմամաս ֆիլմից: Վերջին չորս տարիների ընթացքում զբաղված է եղել իր այս առաջին լիամետրաժ գեղարվեստական ֆիլմը նկարահանելով: Անցյալ տարի այցելել է Հայաստան: Վերջերս դարձել է «Դրամատիկական արվեստների հայկական միության» խորհրդատու վարչության անդամ:

Ֆիլմում, որը ստի կանչին հետեւելու թեման է շոշափում, ընդգրկված է նաեւ հոլիվուդյան լեգենդար դերասաններից Քըրք Դուգլասը:

Հ. Ծ.

ՄԱՐԻԱՆԿԱՐՅԻ ԱՅՔԵՐՈՎ

ԱԶԳ
Տնտեսություն
www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

Ձև N1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳԻՐ
առ 01 հունվարի 2007 թ.

Կազմակերպության անվանումը	«Սոնո» ՍՊԸ	Ծանկագիր
Փաստացի գործունեության հիմնական եկող տեսակները	շահումով խաղ. կազմ. ՍՊԸ	
Պետեգիստրում գրանցման համարը	26911000028	Լից. ՇԱ038 ՇԱ066 ՇԱ096
Հարկ վճարողի հաշվառման համարը		02201592
Տարածքը		հազ. դրամ
Գտնվելու վայրը		Երևան, Շերեքների 45/20
Փաստացի գործունեության իրականացման վայրը		Արմավիրի մարզ, գ. Փառահար-Գիպրով, խանութ, սենկ. 1,2,3,4,5. Արմավիրի մարզ, գ. Փառահար-Գիպրով, խանութ, սենկ. 6,7,8. Կոտայքի մարզ, գ. Յեղեգիս, 1-ին հասել. թիվ 8 եւ 9 հողամ.-ում գտնվող թիվ 3 շինություն

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Դիմնական միջոցներ	010	35931	38594
Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ	020	1222	-
Ոչ նյութական ակտիվներ	030	7500	6667
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	44653	45261
II. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	140	7075	5024
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	2160	-
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	949	301
Այլ դեբիտորական պարտքեր	180	608	
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	1662	9621
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210		638
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	12454	15584
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	57107	60845

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ գուտ գումար	240	10000	10000
Կուտակված շահույթ	270	28863	44188
Պահուստային կապիտալ	280	2149	2149
Ընդամենը սեփական կապիտալ	300	41012	56337
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ	310	14468	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	14468	-
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	1607	4500
Այլ կրեդիտորական պարտքեր	450	20	8
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	1627	4508
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	57107	60845

Ձև N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2006 թ., տարի

Տուգանիչի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	93667	123123
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(70656)	(89188)
Համախառն շահույթ (վնաս)	030	23111	33935
Վարչական ծախսեր	050	(5313)	(5544)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	17798	28391
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում	070	3272	480
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(2268)	-
Գործառնական շահույթ (վնաս)	090	18802	28871
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում	130	257	63
Տնտեսական գործունեությունից շահույթ (վնաս)	140	19059	28934
Զուտ շահույթ (վնաս) նախին շահութահարկի գծով ծախսի նկատմամբ	160	19059	28934
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	(507)	(109)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նկատմամբ հետո	180	18552	28825

Ձև N3

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2006 թ., տարի

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)				
		Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ			
Հոդվածները	տող	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Ընդամենը
1	2	3	10	11	14
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 04 թ.	010	10000	24811	2149	36960
Վերահաշվարկված մնացորդը	030	10000	24811	2149	36960
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	060		18552		18552
Շահաբաժիններ	070		(14500)		(14500)
Մնացորդը առ	100	10000	28863	2149	41012

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)				
		Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ			
Հոդվածները	տող	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Ընդամենը
1	2	3	10	11	14
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 05 թ.	010	10000	28863	2149	41012
Վերահաշվարկված մնացորդը	030	10000	28863	2149	41012
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	060		28825		28825
Շահաբաժիններ	070		(13500)		(13500)
Սերմի շարժ, այդ թվում	091			(1041)	1041
Մնացորդը առ	100	10000	44188	2149	56337

Ձև N4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2006 թ., տարի

Տուգանիչի անվանումը	Նախորդ ժամանակաշրջան			
	տող	Գումար	այդ թվում	
			դրամարկղ դրամ	բանկային հաշիվներ դրամ
1	2	3	4	6
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդ	010	705	2	703
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտք				
Առաջարկի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	86172	86172	-
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում	030	820	820	-
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտք	040	86992	86992	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելք				
Նյութերի, ապրանքների ձեռքերման գծով	050	2666	2666	-
Աշխատանքների կատարման, ծառայությունների ծառայման գծով	060	9849	7201	2648
Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից	070	8771	8771	-
Վճարումներ բյուջե	080	42336	-	42336
Վճարումներ սոցիալական ապահովության հիմնադրամ	090	2107	-	-
Գործառնական այլ գործունեությունից ելք, այդ թվում	100	810	810	-
Ընդամենը գործառնական գործունեությունից ելք	110	66539	19448	47091
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	120	20453	67544	(47091)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտք				
Ոչ ընթացիկ նյութական եւ ոչ նյութական ակտիվների վաճառքից	130	14857	1267	13590
Ներդրումային այլ գործունեությունից մուտք, այդ թվում	160	6700	6700	
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտք	170	21557	7967	13590
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելք				
Ոչ ընթացիկ, նյութական եւ ոչ նյութական ակտիվների ձեռքերման գծով	180	10000		10000
Ֆինանսական ակտիվների ձեռքբերումից, փոխառությունների տրամադրումից	190	16553	16553	
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելք	210	26553	16553	10000
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	220	(4996)	(8586)	3590
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելք				
Վճարված շահաբաժիններ եւ տոկոսներ	280	14500	14500	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելք	300	14500	14500	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	310	(14500)	(14500)	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսք	320	957	44458	(43501)
Սերմի շարժ''	340		(44425)	44425
Դրամական միջոցների մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	350	1662	35	1627

Ձև N5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ ԿՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2006 թ., տարի

5.3.2 Հաշվեպահական հաշվեկշռին կից ծանոթագրություններ

Դիմնական միջոցներ — Աղյուսակ 2

Դասի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Ավելացում ընդամենը	Նվազեցում ընդամենը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	4	5	7	9
Շահագործման մեջ գտնվող ծավալի հիմնական միջոցներ					
Շենքեր					
-հաշվեկշռային արժեք	010	3130	-	-	3130
-արժեք	011	3130	-	-	3130
Առաջարկի գույք, սնմանական գույք, գործիքներ	060	28800	10462	10287	29075
-հաշվեկշռային արժեք					
-արժեք	061	31619	13793	11979	33433
-կուտակված մաշվածություն	062	2719	3331	1692	4358
Ընդամենը շահագործման մեջ գտնվող ծավալի հիմնական միջոցներ	100	32030	10462	10287	32205
-հաշվեկշռային արժեք					
-արժեք	101	34749	13793	11979	36563
-կուտակված մաշվածություն	102	2719	3331	1692	4358
Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ					
-հաշվեկշռային արժեք	120	3901	12643	10155	6389
-արժեք	121	3956	13783	10155	7584
-կուտակված մաշվածություն	122	55	1140	-	1195
Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ					
-հաշվեկշռային արժեք	140	3901	12643	10155	6389
-արժեք	141	3956	13783	10155	7584
-կուտակված մաշվածություն	142	55	1140	-	1195
Ընդամենը հիմնական միջոցներ	160	35931	23105	20442	38594
-հաշվեկշռային արժեք					
-արժեք	161	38705	27576	22134	44147
-կուտակված մաշվածություն	162	2774	4471	1692	5553

Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ — Աղյուսակ 6

Դասի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Ավելացում	Նվազեցում
1	2	3	4	5
Տեղակալման ենթակա մատակարարումներ	020	1222	198	1420
Ընդամենը անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	050	1222	198	1420

Ոչ նյութական ակտիվներ — Աղյուսակ 7

Դասի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Ավելացում ընդամենը	Նվազեցում ընդամենը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	4	5	8	11
Լիցենզիաներ եւ վստահագրեր (ֆրանշիզներ)					
-հաշվեկշռային արժեք	040	7500	10000	10833	6667
-արժեք	041	7500	10000	10833	6667
Ընդամենը	100	7500	10000	10833	6667
-հաշվեկշռային արժեք					
-արժեք	101	7500	10000	10833	6667

Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ — Աղյուսակ 12

Տուգանիչի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը
1	2	3
Երկարաժամկետ փոխառություններ		
-գուտ գումար	020	14468

Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին — Աղյուսակ 14

Հարկատեսակի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	3	4
Շահութահարկ	010	107	(283)
Ավելացված արժեքի հարկ	030	(949)	(16)
Հասույթներից վճարներ	080	1000	4500
Ընդամենը	140	158	4199

Հաշվեկշիռ հոդվածների մարման (փոխհատուցման) ժամկետների դասակարգումը — Աղյուսակ 16

	տող	Կարճաժամկետ գումարներ	Երկարաժամկետ գումարներ
ԱԿՏԻՎ			
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Դիմնական միջոցներ	010	1200	37394
Ոչ նյութական ակտիվներ	020	6667	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	050	7867	37394
II. Ընթացիկ ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում	110	15584	
	111	9621	
	112	638	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	120	15584	
Ընդամենը ակտիվներ	130	23451	37394
ՊԱՍՍԻՎ			
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	140		10000
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում	150	28000	18337
	151	28000	18337
Ընդամենը սեփական կապիտալ	160	28000	28337
V. Ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	200	4508	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	210	4508	
Ընդամենը պասիվներ	220	32508	28337

5.3.4 Ֆինանսական արդյունքների մասին հաշվեկշռային հաշվետվությունը կից ծանոթագրություններ

Ֆինանսական արդյունքների հաշվեկշռային ծախսերի ըստ բնույթի դասակարգումը — Աղյուսակ 18

Տուգանիչի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	93667	123123
Գործառնական այլ եկամուտներ	020	3272	480
Սեփականության գծով ծախսումներ	060	(5313)	(16397)
Սարքավորման եւ ամորտիզացիայի գծով ծախսումներ	070	(2268)	(13994)
Գործառնական այլ ծախսումներ եւ ծախսեր	080	(70556)	(64337)
Գործառնական շահույթ (վնաս)	090	18802	28871
Ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)	100	257	63
Տնտեսական գործունեությունից շահույթ	110	19059	28934
Զուտ շահույթ (վնաս) նախին շահութահարկի գծով ծախսի նկատմամբ	130	19059	28934
Շահութահարկի գծով ծախս	140	(507)	(109)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նկատմամբ հետո	150	18552	28825

Գործառնական այլ գործունեությունից եկամուտ եւ ծախս — Աղյուսակ 19

Տուգանիչի անվանումը	տող	Նախորդ տարի			Հաշվետու տարի (ժամանակաշրջան)	
		Եկամուտ	Ծախս	Արդյունք	Եկամուտ	Արդյունք
1	2	3	4	5	6	8
Այլ դրամական վճարումներից (օտարումներից)	010	2589	2268	321	-	-
Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից	050	683	-	683	480	480
Ընդամենը	140	3272	2268	1004	480	480

Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտ եւ ծախս — Աղյուսակ 20

Տուգանիչի անվանումը	տող	Նախորդ տարի			Հաշվետու տարի (ժամանակաշրջան)		
		Եկամուտ	Ծախս	Արդյունք	Եկամուտ	Ծախս	Արդյունք
1	2	3	4	5	6	7	8
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից (օտարումներից)	010	4097	3840	257	360	297	63
Ընդամենը	120	4097	3840	257	360	297	63

ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ
«ՌԱԴԻՈԼՈՒՐ»
լրատվական-վերլուծական ծրագիր ամեն օր՝ ուղիղ եթերում ժամը 6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00, 15.00 (հայերեն եւ ռուսերեն),17.00, 18.00, 22.00, 23.00
Օդերաշիվ լրատվություն՝ On-line ռեժիմով
www.armradio.am

www.azg.am
www.azgdaily.com
www.azgdaily.eu

Հայաստանի հավաքականը պահպանել է դիրքը

Ֆուտբոլի աշխարհի ներկայիս չեմպիոն Իտալիայի հավաքականին ընդամենը մեկ ամիս էր վիճակված գլխավորելու ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակը: Մարտի 14-ին հրապարակված դասակարգման նոր ցուցակի առաջատարի դերն ստանձնել է Արգենտինայի հավաքականը, որին հաջողվել է նախորդ ամսվա համեմատ երկու հորիզոնական վեր բարձրանալ՝ շրջանցելով Բրազիլիայի եւ Իտալիայի ընտրանիներին: Իսկ աշխարհի հնգակի չեմպիոններ բրազիլացիները, որ երկար տարիներ գլխավորում էին ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակը, եւս մեկ հորիզոնականով նահանջեցին եւ այժմ 3-րդ տեղում են:

Ինչ վերաբերում է Հայաստանի ազգային հավաքականին, ապա մեր ընտրանին պահպանել է դիրքը ցուցակում՝ զբաղեցնելով 119-րդ հորիզոնականը: Ընդ որում, մեկ միավորով մեր հավաքականի վարկանիշն աճել է: Ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի առաջիկա մրցակից Լեհաստանի ընտրանին մեկ հորիզոնականով նահանջել է եւ այժմ 24-րդ տեղում է:

Ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակիցներից ամենաբարձր վարկանիշն ունեն պորտուգալացիները: Նրանք պահպանել են դիրքը 8-րդ հորիզոնականում: Ամենամեծ առաջընթացն ունեցել են ֆիններն, որոնք 15 հորիզոնական բարձրացել են եւ զբաղեցրել 33-րդ տեղը: 7 տեղով առաջադիմել են ադրբեջանցիները (123-րդ տեղ), 2-ով՝ ղազախները (143-րդ), մեկով՝ սերբերը (28-րդ): Միայն բելգիացիներն են նահանջ արձանագրել 3 հորիզոնականով՝ զբաղեցնելով 56-րդ տեղը:

ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակի 207 երկրների հավաքականներից ամենամեծ առաջընթացն ունեցել է Պանամայի ընտրանին, որը 20 հորիզոնականով վեր է բարձրացել: 11 տեղով առաջադիմել է Նիկարագուայի ընտրանին: Իսկ ահա Կանադայի հավաքականը 16 տեղով նահանջել է: 13 հորիզոնականով նահանջել է Սալվադորի հավաքականը, 11-ով՝ մոլդովացիները: Անփոփոխ է մնացել լավագույն տասնյակի կազմը, որի ներսում տեղաշարժը վերաբերում է միայն առաջին եռյակին:

Ներկայացնում ենք լավագույն տասնյակի եւ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականների ցուցանիշները:

1. Արգենտինա	1616
2. Իտալիա	1592
3. Բրազիլիա	1557
4. Ֆրանսիա	1515
5. Գերմանիա	1390
6. Անգլիա	1339
7. Հոլանդիա	1313
8. Պորտուգալիա	1288
9. Չեխիա	1195
10. Իսպանիա	1161
11. Ուկրաինա	1037
23. Ռուսաստան	854
53. Ուզբեկստան	558
66. Բելառուս	466
76. Լիտվա	425
85. Վրաստան	374
94. Մոլդովա	342
98. Լատվիա	314
106. Էստոնիա	266
119. Հայաստան	210
123. Ադրբեջան	201
127. Տաջիկստան	188
143. Ղազախստան	144
145. Կիրգիզիա	131
158. Թուրքմենստան	88

Նալբանդյանն անհաջողության մատնվեց

Ամերիկյան Ինդիան Ուելսում ընթացող թենիսի միջազգային խոշոր մրցաշարի չորրորդ փուլում Դավիթ Նալբանդյանն անհաջողության մատնվեց՝ պարտվելով խորվաթ թենիսիստ Իվան Լյուբիչիչին (6-2, 4-6, 2-6): Հաջորդ փուլ մտավ ամերիկացի Էնդի Ռոդիկը՝ հաղթելով ֆրանսիացի Ռիշար Գասկեին (6-3, 7-6): Արգենտինացի խուան Իգնասիո Չելան էլ առավելության հասավ ամերիկացի Մայլզ Ռասելի նկատմամբ (6-4, 6-4): Պայքարը կշարունակի իսպանացի Ռաֆայել Նադալը: Նա երկու խաղափուլում միեւնույն 6-1 հաշվով պարտության մատնեց իր հայրենակից խուան Կառլոս Ֆերերոյին:

Կանանց մրցաշարում անհաջողության մատնվեց ռուսաստանցի Մարիա Շարապովան՝ զիջելով իր հայրենակցուհի Վերա Զվոնարյովային: Այս պարտությունից հետո Շարապովան թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման ցուցակում առաջատարի դիրքը կզիջի բելգիացի Ժյուստին Էնենին:

Պայքարը շարունակում են նաեւ Լի Նան, Դանիելա Հանտուխովան, Պետր Շախարը, Տատյանա Գոլովինան, Սվետլանա Կուզնեցովան եւ Նիկոլ Վայդիշովան:

Հայաստանը կներկայացնեն չորս մարզիկներ

Հայաստանցի չորս մարզիկներ կմասնակցեն մարտի 17-ին Մելբուռնում կայանալիք ջրային մարզաձեւերի աշխարհի առաջնությանը: Իհարկե, մեր մարզիկներից բարձր արդյունքներ դժվար է ակնկալել: Առաջնությունը նրանց համար մրցակցային փորձ ձեռք բերելու հիանալի հնարավորություն է: Մելբուռնում մրցասպարեզ դուրս կգան լողորդներ Միխայել Քոլոյանը, Հարությունը Հարությունյանը, Արամ Նազարյանը եւ ջրացատկորդ Հովհաննես Ավքանդիլյանը: Հայաստանի մարզական պատվիրակության ղեկավարն է լողի Ֆեդերացիայի նախագահ Իգոր Սաֆարյանը:

Պարային զույգը նախապատրաստվում է Մոսկվայում

Հայաստանը ներկայացնող Անաստասիա Գրեբյոնկինա-Վազգեն Ազրոյան պարային զույգը կմասնակցի մարտի 18-ին Տոկիոյում մեկնարկող գեղասահքի աշխարհի առաջնությանը: Մեր գեղասահորդներն ուժերի այդ պատասխանատու ստուգատեսին նախապատրաստվում են Մոսկվայում, որտեղից էլ կմեկնեն մրցավայր:

VIVAcell

Ձեր ընտրանքը

Վիվասելը տեղեկացնում է իր բաժանորդներին, որ մարտի 24-ից սկսած, Վիվասելի այլ բաժանորդներին զանգահարելիս՝ բջջային վեցանիշ հեռախոսահամարից առաջ անհրաժեշտ է հավաքել «093» կոդը: Առանց կոդի կատարված զանգերը չեն իրականացվի:

Վիվասելը ուրախ է հայտարարել, որ շուտով շրջանառության մեջ կդրվի «094» կոդով սկսվող համարների նոր շարք՝ իր բջջային հեռախոսահամարների եւ ծառայությունների աճող պահանջարկը բավարարելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել 111:

VIVAcell

Ձեր ընտրանքը

Վիվասելը տեղեկացնում է, որ իրականացնում է իր բջջային ցանցի կատարելագործման մեծածավալ աշխատանքներ՝ հզորություններն ու մատուցվող ծառայությունները բարելավելու նպատակով:

Ցանցի կատարելագործման աշխատանքների պատճառով ս. թ. մարտից մինչեւ ապրիլի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում հնարավոր են կարճատեւ դժվարություններ՝ զանգեր կատարելու եւ ստանալու, ինչպես նաեւ կարճ հաղորդագրություններ (SMS) ուղարկելու ժամանակ:

Բաժանորդներին պատճառվող անհարմարությունները հնարավորինս նվազեցնելու նպատակով ցանցի կատարելագործման աշխատանքները հիմնականում կիրականացվեն ոչ ծանրաբեռնված ժամերին եւ կեսգիշերից հետո:

Մեր սպասարկող անձնակազմը մշտապես կլինի բաժանորդների տրամադրության տակ՝ անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Վիվասելը հայցում է բաժանորդների ներողամտությունը հնարավոր անհարմարությունների համար:

USAID FROM THE AMERICAN PEOPLE

FORECAST Human and Institutional Capacity Development Project

Հայտերի ընդունում

Կրթության ոլորտի փորձագետ- իրավաբան

Հայտարարման օրը՝ 2007, մարտի 6
Հայտերի հանձնման վերջնաժամկետը՝ 2007, մարտի 20

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության (ԿԳՆ) աննունից «Կրթությամբ զարգացման ակադեմիա» հրավիրում է կրթության բնագավառի փորձագետ-իրավաբանի՝ կրթության եւ գիտության նախարարության՝ Հայաստանի կրթության ոլորտի նոր ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքային խմբում ընդգրկվելու համար: Փորձագետից ակնկալվում է փորձագիտական-իրավաբանական ծառայությունների մատուցում՝ առանց սահմանված աշխատաժամերի, մասնակի զբաղվածությամբ, գործավարձային հիմունքներով՝ 2 ամսվա ընթացքում: Իրավաբանը կաշխատի նախարարության աշխատանքային խմբի ղեկավարի ենթակայությամբ:

ԿԳՆ-ի Կրթության ոլորտի փորձագետ- իրավաբանի պարտականություններն են.

1. ուսումնասիրել, վերլուծել եւ համադրել Հայաստանի կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությունը՝ անհրաժեշտության դեպքում ներառելով այն հարակից օրենսդրական փաստաթղթերը, որոնք անմիջականորեն առնչվում են կրթության ոլորտին կամ այդ ոլորտի հիմնական շահառուներին,
2. վերլուծության արդյունքում կրթության ոլորտի օրենքներում եւ իրավական ակտերում, ինչպես նաեւ ոլորտին առնչվող այլ օրենքներում եւ իրավական ակտերում հայտնաբերված հակասությունների, կրկնությունների եւ բացերի վերաբերյալ տեղեկատվությունը ճշգրտել աշխատանքային խմբի անդամների հետ, դրանց կատարելագործման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ,
3. մշակվող ռազմավարական ծրագրի համապատասխան ներկայացնել կրթության ոլորտը կարգավորող անհրաժեշտ իրավական ակտերի ընդունման առաջարկություններ,
4. կրթության օրենսգրքի ստեղծման նպատակով ներկայացնել օրենսգրքի մշակման հայեցակարգ եւ ժամանակացույց,
5. պարբերաբար մասնակցել աշխատանքային խմբի հանդիպումներին եւ տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

Պահանջվող որակավորումը.

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- օրենսդրության հետ աշխատելու առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ,
- հետազոտական աշխատանքի եւ հաղորդակցման հմտություններ,
- կրթության օրենսդրության մշակման կամ վերլուծության ոլորտում մասնագիտական աշխատանքային փորձ (ցանկալի է)
- հայերեն լեզվով գրավոր նյութեր պատրաստելու գերազանց կարողություն:

Հայտ ներկայացնելու կարգը

Հայտերը պետք է ներկայացվեն Կրթությամբ զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) հայաստանյան գրասենյակ՝ էլ. փոստով՝ aed@arminco.com ոչ ուշ քան 2007 թ. մարտի 20-ը, ժամը 18:00-ը:

Պահանջվող փաստաթղթերը

- Նամակ հետեւյալ տեղեկություններով՝
  դիմորդի համապատասխան որակավորումները նշված աշխատանքի համար,
  դիմորդի հնարավորությունները աշխատանքը սկսելու ամենավաղ ժամկետի,

տեսողության, ինչպես նաեւ մասնակի դրույքով աշխատելու վերաբերյալ,

- ինքնակենսագրություն,
- երկու երաշխավորող անձանց տվյալներ,
- դիմորդի մասնագիտական գործունեության ընթացքում պատրաստած գրավոր նյութի նմուշ/ օրենսդրական վերլուծություն (առավելագույնը 3 էջ):

FORECAST/HICD
Academy for Educational Development 10 Aygedzor Str., Yerevan 0019, Armenia
Ph: (37410) 22-10-48; 26-69-87; FAX: (37410) 275-686
Email: aed@arminco.com; URL: www.aed.am

UNDP

ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակը հայտարարում է տրանսպորտային ծառայությունների մատուցման մրցույթ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել սկսած 2007թ. ապրիլի 1-ից մինչեւ տարվա վերջ:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակ՝

ք.Երեւան, Պետրոս Ադամյան 14, Գագիկ Շահինյանին, հեռ.՝ 56-60-73 լր.119,

Առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է 2007թ. մարտի 23-ը, ժ. 16.00:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՍԱՐ ՅԱՆԳՈՒՇԱՐԵԼ՝ 56-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 14.02.2007, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: